

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԵՅԻՆ-ԽՄԱԳՐԱՊԵՏ Մ. ՊԱՆՍԱՐԵԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### Խոնարակիս

1. Գննադատութեան ոգին (ՄՈԳ-ՊԵՏ) ..... 129

### Ուսումնասիրութիւն

2. Վիքթոր Հիւկո (Մ. Պ.) .. 132

### Դասախօսք. եւ Հրատարակախօսք.

3. Գանժի վարդապետութ. —Փրոֆ. Սեալլ—(\*\*\* ) . . . . 139

4. Բուսակենսիկներ եւ վարակիչ հիւանդութիւններ —Փրոֆ. Տակիյոն — (ՆՇԱՆ) .. 150

5. Փոխանցիկ հիւանդութ. —Փրոֆ. Պրուս — (Կ. Յ.) . 158

6. Դպրոց եւ բարոյական դաստիարակութիւն—Փրոֆ. Լ. Ժ. Վառե —..... 163

### Գիտական Կենսագրական

7. Լամառք—Շառլը Մառքեն 169

### Գիտական Լուրեր եւ Նորութիւններ

8. Սիրազ եւ վիրաբուժութիւնը ..... 176

9. Բժշկութեան ուսանողնորութիւնը Ֆրանսայի մէջ՝ 1902ին ..... 180

10. Անձրեւ արհեստական միջոցներով ..... 181

11. Ուղեղային կիսագունտըէն զրկուած աղաւնիի մը կրթումը ..... 182

12. Կովու կաթին ժառանգական յատկութիւնները .. 183

### Վերջին Հրատարակութիւններ

13. Հայ Եկեղեցականութեան շուրջը —Մուրճ եւ Հանաչարսւն — (Ա. Հ.) ..... 184

14. Մարդկութեան ամենամեծ թշնամին (ՆՇԱՆ) ..... 187

15. Տեսութ. մը Բանասեր (Կ.Կ.) 188

16. Փարիզի Հայոց Բարեգործ. Ընկ. Երջարեակաւնը ... 191

Բ. ՇՐՋԱՆ (1901 - 1902. ԱՊՐԻԼ, ՄԱՅԻՄ) ԹԻՒ 5, 6

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ — ԽՄԱԳՐՈՒԹԻՒՆ — ՏՊԱՐԱՆ

4, Rue Ortolan - PARIS

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

«Համալսարան»ի այս զոյգ թիւերով Բ. Շրջանի վեց-ամսեան կը լրանայ: Շատ գոհ պիտի մնայինք եթէ իրենց բաժնեգրիները տակաւին չվճարողները, զանոնք մեզ զրկելու փութային, որով մեզի մեծ պիւրութիւն ընծայած կ'ըլլան՝ երկրորդ վեցամսեան նոյն իսկ իր ժամանակէն առաջ լրացնելու:

Ռուսաստանի եւ Ամերիկայի մեր բաժանորդները կըրնան մեզի թղթադրամ զրկել:

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիկոլիդիա. Գ. էֆ. Պաղտասարեան. — Ղրկուած է նամակով Ձեր հասցէին կանոնաւոր բաժանորդներու ստացազիրները: Իրամը մեզ զրկել ինչպէս ցոյց տրուած է նամակով: Մնացեալ թիւերն ալ կը խնդրենք, հաճեցէք զնտեղել, դրամը ստանալուս կը զրկենք ստացազիր: Ասքանազեան գրադարանին ուղած Ա. Շրջանի կէս կաշի ոսկեզօծ հատորը կ'արժէ 15 ֆռանք. որպէս զի գրադարանին գեղջ մը ըրած ըլլանք, կրնանք այդ հատորը եւ Բ. շրջանի 12 թիւերը իրենց զրկել 20 ֆռանքի փոխարէն: Ձեզմէ դրամը ստանալուս կը զրկենք հատորը:

Թոխար. Խ. էֆ. Թաշճեան. — Նոր բաժանորդներ միայն գտնել աշխատեցէք. կանխիկ բաժանորդագրութեամբ՝ որքան որ կարելի է:

Կերչ. Պր. Մ. Պալեան. — Նամակ կը գրեմ շուտով: Շնորհակալութիւն: Բաժանորդը ստացած ըլլալու է արդէն համարները:

Թիֆլիզ. Արժ. Տ. Եզնիկ Ա. քնյ. Երզնկեանց. — Ձեր պատասխանին կը սպասենք:

Թիֆլիզ. Արժ. Հայր Գ. Նահապետեան. — Ձեր ուղած գիրքը անկարելի եղաւ ուզուած պայմաններու մէջ գտնել: Ուրիշ կարգադրութիւն ըրէք:

### ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակուած է ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից:

Եւրոպայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 30 ֆրանք:

Հասցէն՝ Tiflis (Russie) Rédaction  
du journal arménien Mischak

### ՄՈՒՐՉ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՈՒՄՍԱԳԻՐ

(Խմբագիր-հրատարակիչ Կ. Կրսնսիլնիկեան)

Բաժանորդագիրը՝ արտասահմանում 12 ուսուրի:

Հասցէ՝ Tiflis (Russie). Rédaction de la Revue Mourtch

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ այս պրակը ունի փոխանակ 32ր 64 հը եւ հետեւաբար կը կազմէ 5 եւ 6 թիւերը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 7րդ ԹԻԻԸ ՄԱՄԼՈՅ ՏԱԿ Է:



## ՅՈՒՍԱԽԱՓՈՒԹԻՒՆՆԵՐ

Առանց յոռետես ըլլալու եւ ոչ ալ լաւատեսութեամբ սրտապնդուելու, կրնանք ապահովաբար ըսել թէ կ'ապրինք շրջան մը, ուր կանխատեսուած ապագան չի խոստանար որ եւ է երջանիկ բարելաւում, մեր արդի մտաւոր, բարոյական եւ վերջապէս կենցաղավարական ինկած վիճակին մէջ:

Երբ գոյութեան պահպանումը ցեղի մը ամէնէն էական մտազբազումը կը կազմէ, այդ պահուն երեւան կուգան անոր մէջ ամբարուած կենսունակ կարողութիւնները, կորովալիբ միաքերը, ղեկավարիչ ձեռքերը եւ կամ, — զժբաղդաբար ճշմարտութիւն մը մեզի համար, սրտակեղեք իրականութիւն մը անդարմանելի, — շարուած դատարկութիւնները, անկարելի ոչնչութիւնները:

Արտասահմանի հայութեան ապրած միջավայրը, իր մասնաւոր առաւելութիւններով, թոյլ կուտայ մեզի մեր բարոյական հրապարակին մէջ աւելի ազատ մուտք գործել եւ արժէքաւորել հոն սիրուած ու յարգուած կուռքերը, մեր տոնմային տգիտութիւնը եւ պարզամտութիւնը վայրագօրէն շահագործողները ու ամբողջ ազգային կեանք մը իրենց մորթովը պատանքողները:

Ու այն խենչէ համբանները, ոճրագործ անպարարները, տարապայմանօրէն վերապահները անտարակոյս պիտի անհետանային եթէ մաքրագործումի ըմբռնումը համայնական դիտակցութիւն մը ստանար եւ այդ դիտակցութիւնը ապերասան դործադրութեան մը մատնուէր:

Ուրբան անգամներ յուսախափութեան ցաւաքին ազդակները արծակած ենք՝ երբ ի մանկութենէ մեր ակահնջն ի վար արոտասանուած եւ սիրուած անունի մը իրական պատկերին առջև գտնուած եւ մեր տարուզղուած հաւատքին մէջ հիասթափած ենք:

Ու վայրկեան մը դու քու մէջք կ'ամբիփուրիս, կը հարցնես ինքզինքիդ՝ դու քեզմէ, հոգիիդ խորէն, բանականութեանդ ծալքերէն՝ «գուցէ սխալուածիք» մխիթա-

րող պատասխանը ստանալու: ... Ի դո՛ւր տեսլական մեկ-  
նաբանութիւններու խուսափուն հաստատողականութեան  
կը կառչիս: Իրականութիւնը իր թելադրական եւ կազմա-  
լուծիչ աւերումը գործած էր. ամբողջ պաշտումի շէնք մը  
կործանած եւ փոշիացած էր մէջդ ու երբ դառն տպաւո-  
րութենէդ պաղ քրտինքով մը, շարչարուած եւ լլկուած,  
կ'արթննաս՝ այդ օրէն կը բողբոջի՝ քու թարմ զգացումնե-  
րուդ բուրաստանին մէջ՝ սկեպտիկ թախիծը եւ հետող  
զգուշաւորութիւնը, դէպի մեր գիմակաւորները ...

Փարիզի Հայ ուսանողներու Միութեան սրահին մէջ,  
քանի մը տարի առաջ, Գրադարանապետին, — որ գաւա-  
ռացի երիտասարդ մըն էր, — կը ներկայանայ անձ մը՝  
թերթերու ծրար մը ձեռքը.

— Այս թերթերը ուսանողներու մէջ բաժնեցէք, կ'ըսէ,  
նորեկը, ու ծրարը գրասեղանին վրայ դնելով կը հեռա-  
նայ:

Գրադարանապետը երկար ժամանակէ ի վեր կը  
փափնքէր տեսակցութիւն մը ունենալ այդ թերթին հան-  
րածանօթ խմբագրապետին հետ, ու հազիւ թէ կը ըս-  
թախէր իր մտածումը իրագործել, արդէն ծրարաբերը  
անհետացած էր:

Գահավիժօրէն դուրս կը ցատկէ ու կը պօռայ ետեւէն.

— Մօ՛, աղա՛յ, հը՛, կեցի՛ր, ի՞նչ շուտ ճապանդ վե-  
րուցիր:

Ու գայն կեցնելով՝

— Կրնա՞ս ըսել երբ պ. Գ<sup>\*\*\*</sup>ն կրնամ տեսնել, որ  
քեզ յանձնած էր թերթերու ծրարը: Ո՞ր ժամերուն կ'ըն-  
դունի, կամ թէ զիս կրնա՞ք պ. Գ<sup>\*\*\*</sup>ին ներկայացնել:

Արտաքին տեսքով անփառունակ անձանօթը, որ պ.  
Գ<sup>\*\*\*</sup>ի ծառան ըլլալու ամէն հաւաստիութիւնը ցոյց կու-  
տար, նուազուն նայուածքով մը կը պատասխանէ գրա-  
դարանապետին.

— Ես եմ պ. Գ<sup>\*\*\*</sup> անուանեալը:

Մտա՛ն, պ. Գ<sup>\*\*\*</sup>ն, հանրածանօթ խմբագրապետը ... :

Չ Ե Ի Ա Շ Ր Չ Ո Ի Մ (\*)

(Transformisme)

(Դասախօսութիւն Փրոֆ. Ռէմի ՓէՌԻԷԻ, Փարիզի  
Կրտութեանց Համալսարանէն)

Ա.

Ժառանգականութիւն: Տեսակի աստիճանաւոր. — «Ամէն կենդանի էակ իր սերունդին կը փոխանցէ իր յատկութիւններուն մեծ մասը»: Այս անվիճելի իրողութիւն մըն է, որ կը կազմէ ժառանգականութիւնը:

Ատկից կը հետեւի թէ այն ամէն անհատները, որոնք սերունդի մը կը պատկանին, գրեթէ ճշգրիտ կերպով իրարու կը նմանին: Ասոնց մէջ դիտուած տարբերութիւնները բոլորովին երկրորդական են. օրինակ՝ անհասական սարքերութիւններ կամ անհասական յատկանիշներ:

Այդ սերունդէն դուրս գոյութիւն ունին նաեւ բազմաթիւ անհատներ՝ որոնց առաջիններուն հետ ունեցած ազգաբանական (généalogique) կապակցութիւնը չի կրնար ապացուցուիլ. բայց այն աստիճան կը նմանին անոնց որ զանոնք բաժնող տարբերութիւնները բոլորովին երկրորդական կը դառնան: Այդ պատճառաւ հարկ դատած են բոլոր այդ անհատները սերտիւ իրարու մօտեցնել եւ զանոնք տեսակ (espèce) անուան տակ ժողովել. հետեւութեամբ ենթադրելով թէ անոնք բոլորն ալ ազգաբանական ճշմա-

\*) «Համալսարան»ի Ա. Շրջանին մէջ հրատարակած էինք «Ձեւաշրջում»ի պատմական մասը: Պ. Ռէմի ՓէՌԻԻ դասախօսութիւնը, զոր այսօրուրնէ կը սկսինք հրատարակել, այդ վարդապետութեան ժամանակակից ըմբռնումին հակիրճ եւ ամփոփ գաղափարը պիտի տայ մեր ընթերցողներուն, ամբողջացնելով այդ մասին նախորդ շրջանէն իրենց ունեցած ծանօթութիւնները: (Տես «Համալսարան» Ա. Շրջան, էջ 166, 232, 317, 435): Ծ. Խ.

րիտ կապակցութիւն մը ունին եւ համայնական նախնիքներէ յառաջ կուգան, որոնք ծագում առած են շատ հեռաւոր ժամանակներու մէջ: Այսպէս, տեսակը կրնանք սահմանել, ինչպէս Քիւլիէ. «Անհատներու հաւաքածոյ մը, իրարմէ ծնած կամ համայնական ծնողքներէ սերած եւ ամէն անոնցմէ՝ որ իրենց կը նմանին այնքան որքան նմանութիւն ունին իրարու մէջ:» Այսպէս սահմանուած՝ տեսակը յատկանշուած կը լինի այն համայնական կապերով՝ որոնք ընդհանուր են իր պարունակած բոլոր անհատներուն. այդ կապերը կը կոչուին *սեռակարար յասկանիչներ*:

*Չուգաւորումներու (croisement) ազդեցութիւնը* սեռակարար յասկանիչներու կազմութեան վրայ. — Առաջին խնդիր մը կը ներկայանայ հոս, այսինքն ժառանգականութեան զօրութեամբ ամէն անհատ իր սերունդին կը փոխանցէ ոչ միայն իր տեսակարար՝ այլ եւ անհատական յատկանիչները: Այդ վայրկեանէն անհատական տարբերութիւնները, բարդուելով իւրաքանչիւր սերունդի վերայ, պէտք էր որ, ինչպէս կը թուի, ստանային յարաձուռ կարեւորութիւն մը, մինչեւ որ հետզհետէ անհետացնէին տեսակարար յատկանիչները. այս ետքինները պիտի սքողուէին վերջապէս, անհատական փոփոխութիւններով, այնպէս որ մի քանի սերունդներէ վերջ՝ միեւնոյն զարմի զանազան անհատները իրենց մէջ նշանակելի տարբերութիւններ պիտի ներկայացնէին:

Եթէ այսպէս չէ իրականութեան մէջ, որովհետեւ ժառանգականութեան հետ կ'ընթանայ նաեւ ուրիշ ազդակ մը որ կը ձգտի անհատական յատկանիչները ջնջել եւ տեսակարար յատկանիչները հաստատել. այս ազդակը *բեղմնաւորութիւն (fécondation)* է:

Արդարեւ, ընդհանրապէս երկու անհատներ կը զուգաւորուին նորեր արտադրելու համար: Արու բջիջը համաձուլուելով էգ բջիջին հետ յառաջ կը բերէ արմատ բջիջ (*cellule souche*) մը կամ ձուռն, որ կը կազմէ նոր էակին առաջին տարրը:

Այդ առեւէն իսկ երկու տարբեր սեռէ բջիջները իրենց ծնունդին կը հաղորդեն փոխազարձաբար իրենց յատկանիչները: Արդ երբ զուգաւորութիւնը ղիպուածաբար կը կատարուի, անհատական յատկանիչները տարբեր ըլ-

լալով, ծնունդ տուող երկու անհատներու մէջ, ընդհանրապէս կը ձգտին զիրար չէզոքացնել. ընդհակառակը անոնց ընդհանուր եզող տեսակարար յատկանիշները կը շեշտուին եւ իրենց վերապահելով գերակշռութիւնը՝ կը վանեն միւսները :

Իրապէս, կարգ մը պարագաներու մէջ, երկու տարբեր սեռի պատկանող անհատներու միութիւնը անհրաժեշտ չէ նոր էակի մը ծնունդ տալու համար. անհատ մը միայն կը բաւէ վերարտադրուելու համար, ու, մասնաւոր եղանակներով, ծնունդ կուտայ նոր էակներու :

Բայց ծննդագործութեան այս կերպերը ընդհանրապէս միայնակ գոյութիւն չունին. բաւական թուով անսեռ ծննդագործութենէ վերջ սեռային ծննդագործութիւնը կ'երեւի վերստին իր կազմաւորիչ ազդեցութեամբը : Շատ մը ստորին կարգի պատկանող նախակենդանիներու (protozoaires) օրինակ ակիպի եւ կրովի մէջ միայն զիտուած չէ սեռական միաւորում :

Սեռական ծննդագործութիւնը, սեսակը որոշել ու սահմանելու համար, նոր զատանիշ (critérium) մըն ալ կը բնայ տակաւին ներկայացնել, այսինքն «բեղմնաւորութիւնը կը կատարուի մի միայն նոյնատեսակ կենդանիներու միջեւ» Քանի մը բացառութիւններ զանց ընելով, որոնց մասին յետոյ պիտի խօսինք, կարելի է իբր ըսկզբունք ընդունիլ թէ բեղմնաւոր զուգաւորութիւնը նոյնատեսակ արու եւ էգ կենդանիներու մէջ միայն կը կատարուի, տարբեր տեսակի պատկանող երկու կենդանիներ կամ չեն զուգաւորիր եւ կամ իրենց զուգաւորութիւնը անպտուղ կը մնայ :

Մէկ խօսքով նոյնատեսակ զանազան անհատներու յատկանիշներն են, ողգաբանախակ կսպ, գրեթէ կասարեայ նեւանուրթիւն, բեղմնաւոր գուգաւորումներու կարեյիւրթիւն :

Տեսութիւն սեսակներու կազմութեան. — Լիննէ եւ Քիւվիէ կուսակից էին նախախնամութեան մը կողմէ սեսակներու առանձին ստեղծման եւ հաստատման գաղափարին : Երբ հետզհետէ կենդանական ձեւերը աւելի մօտէն կ'ուսումնասիրուին, նոր տեսակներ կը բարդուին հիններու վրայ, որոնք երկար ատեն տեսակներու միջեւ ընդունուած բացարձակ պատուարի ըմբռնումը կը տկարացնեն : Բոլորովին նոր յղացում մը, նոր վարդապետութիւն մը կը ծնի,

որ կը ջանայ կենդանական աշխարհը բացատրել բոլորովին տարբեր կերպով . այս սինտութիւնը անհաշտօրէն կը հակառակի տեսակներու վերջնական կազմութեան տեսութեան : Այդ նոր վարդապետութեան համաձայն, տեսակները այլեւս առանձնացած, անփոփոխ էութիւններ ըլլալէ կը դադրին, կազմուած ու պատրաստ ստեղծուած արարչութեան մը ձեռքով . ընդհակառակը անոնք հիմնովին փոփոխութեան ենթակայ՝ ծագում կուտան նոր տեսակներու : Դրացի տեսակները իրարու հետ այն աստիճան մօտ կազմակերպութիւն մը եւ այն աստիճան սերտ առնչութիւններ ունին որ եթէ օտար պատճառներ անոնց միջեւ եղած անցքերու կապերը չանհետացնէին, որոշ կերպով սահմանուած տեսակներ գոյութիւն չպիտի ունենային . այլ միայն ձեւերու շարունակական երկար մի շղթայ, ուր զանազանութիւնը շատ անդալի կերպով պիտի ներկայանայ :

Տեսակներու այս զանազանութիւնը Ձեւաշրջական վարդապետութեան (Doctrine Transformiste) հիմնական սկզբունքն է, որ կը կոչուի նաեւ Սերնդական տեսութիւն (Théorie de la descendance), որովհետեւ տեսակները նկատողութեան կ'առնէ իբր ազգաբանականօրէն իրարմէ ծագում առած, եւ կամ բնաշրջան տեսութիւն (théorie de l'évolution), որովհետեւ մեզ ցոյց կուտայ թէ յարատեւ բնաշրջամբ տարբեր տեսակները կը փոխուին՝ նոր տեսակներ յառաջ բերելու համար :

Ձեւաշրջումը Տարուիկէն առաջ . — Կենդանական ձեւերու փոփոխութեան կարելիութեան գաղափարը գիտութեան մէջ բոլորովին նոր չէ : Յայտնուած նախնի փիլիսոփաներէն անորոշ կերպով՝ առաջին անգամ գիտականօրէն Պիւֆոնէն հրապարակ զրուեցաւ : Պիւֆոն կենդանաբանական իր առաջին քայլերուն, տեսակներու կազմութեան համոզուած կուսակից մըն էր . ու այդ ասպարէզին մէջ որքան կը յառաջանայ իր սկզբունքներն ալ այնքան կը փոխուին : Իր «կենդանիներու Բնական Պատմութիւն» գործին մէջ շատ անկեղծ կերպով ցոյց տուած է իր մտքի բարեշրջման զանազան երեւոյթները, եւ վերջ ի վերջոյ որոշ կերպով կը յայտարարէ թէ «կենդանեաց տեսակներու ձեւը անփոփոխելի չէ, թէ անոնք կրնան զանազանիլ եւ նոյն իսկ բոլորովին ձեւափոխուիլ՝ նայելով իրենց ապրած միջա-

վայրին . . . : նուազ կատարեալ, ամէնէ փափկակազմ, նուազ կշռող, նուազ գործող, նուազ զինուած, եւ այլն տեսակները արդէն աներեւութացած են եւ կամ ժամանակին հետ պիտի աներեւութանան» : Կը տեսնենք որ Պիլֆոն արդէն տեղեակ էր կեանքի մրցման, բնական ընտրողութեան ազդեցութեան, որ շատ վերջը Տարուին համոզիչ փաստերով կը պարզէ եւ վերջնական յաղթանակը կը տանի, նաեւ ցոյց տալով կլիմայի եւ միջավայրի ազդեցութեան տակ յառաջ եկած փոփոխութիւնները : Պիլֆոն կ'ընդունի դարձեալ այդ ազդեցութիւններու շնորհիւ նոր տեսակներու երեւման կարելիութիւնը եւ մասնաւորապէս կարծիք կը յայտնէ թէ «նոր աշխարհի բոլոր կենդանիները հաւանական է որ վերջնականապէս իրենց ծագումը առած ըլլան հին աշխարհի կենդանիներէն, եւ որ իրենց կարգին կը բարեփոխուին նոր կլիմայի տակ . . . »

Լամառք, Պիլֆոնի բարեկամը, պէտք է նկատել ձեւաչափով վարդապետութեան ճշմարիտ ստեղծողը : Ինքը եղաւ որ առաջին անգամ ջանաց գիտական կերպով բացատրել կենդանիներու ձեւերուն զանազանութիւնը : Կենդանիները կրնան «համակերպիլ» (s'adapter) ուրիշ միջավայրերու, կեանքի ուրիշ պայմաններու, այս համակերպումները կրնան առաւել կամ նուազ նշանակելի կերպով անոնց գործարանները փոխել : Լամառք կենցաղաւարտութեան ազդեցութիւնը մասնաւորապէս զերակշիռ կը համարէ . գործարանները կը զարգանան կամ կը տկարանան անոնց գործունէութեան կամ անգործութեան համեմատ . այսպէս, նոյն իսկ յօրինուածքի պաշտօնավարութիւնը կենդանիներու զանազանութեան մէջ նշանակելի գեր մը կը կատարէ :

Էթիէն Ժօֆուուա Սէն-թիլէո ալ, որ Լամառքի ժամանակակից էր, համոզուած կուսակից մը կը ներկայանայ ձեւաչափով վարդապետութեան, բայց իր կարգին մասնաւորապէս գիտել կուտայ թէ, միջավայրի ազդեցութիւնն է որ գործարանաւորութեան վրայ յառաջ կը բերէ փոփոխութիւններ : «Կենդանական աշխարհը ուրիշ բան չէ, կ'ըսէ, բայց եթէ ստեղծման աստիճանաբար յառաջընթաց դրութիւն մը, որ անդադար կը փոխուի միջավայրի զօրաւոր ազդեցութեան տակ : » Այս ազդեցութեան տակ էակները կը ձեւաչափուին եւ այսպէս կը բացատրուի այն

միօրինակ ծրագիրը (plan uniforme), զոր ժօֆուուա, ժայրայեղ չափազանցութեամբ մը կը կարծէր՝ առանց բացառութեան, երեւան բերել բոլոր կենդանիներու կազմաբանութեան մէջ :

Լամառքի եւ ժօֆուուայի ժամանակ ձեւաչըջումի վարդապետութիւնը մարմին կը ստանայ եւ խնոյեան կը դառնայ Քիւլիէի ներկայացուցած «տեսակներու կազմութեան» վարդապետութեան . ահա այսպէս այս երկու բնապատուհներու միջեւ պատմական երեւելի պայքարը կը սկսի, որ երկու տարի կը տեւէ (1830—1831) . այս պարագային մէջ Քիւլիէ յաղթող կը հանդիսանայ իր գեղեցիկ տրամախօսութեան արուեստով միայն, թէեւ ատ իր մէջ ճշմարտութիւն չի պարունակեր : Քիւլիէի գաղափարներուն յաղթանակը այն արդիւնքին առիթ կուտայ որ, երկար ժամանակի մը համար, թէ՛ Ֆրանսայի եւ թէ՛ ուրիշ երկիրներու մէջ բնաչըջական գաղափարներու զարգացումը կատարելապէս անկման կը դատապարտուի :

Տարուին : Տեսակներու ծագումը . — Վերջապէս 1839ին Տարուին Անգղիոյ մէջ կը հրատարակէր իր «Տեսակներու ծագումը» հանրածանօթ գիրքը, ուր վարդապետական ձեւի մը տակ կը պարզէր տեսակներու զանազանութեան պատճառները եւ օրէնքները : Իր տեսութիւնը, թէեւ յետոյ կը բարեփոխուի եւ կ'ամբողջանայ, բայց կը մնայ միշտ կենդանական աշխարհի այժմու ըմբռնման հիմը : Իր գիրքը ահագին յեղաշրջում յառաջ բերաւ, սակայն եւ այնպէս Ֆրանսայի կենդանաբանները տակաւին Քիւլիէի գաղափարներուն տիրապետող ազդեցութեան տակ՝ երկար ժամանակ մը ըմբոստ պիտի մնային Տարուինի բեղմնաւոր տեսութեանց դէմ :

Ս. ԵՐԿԱՆԵԱՆ

Փարիզ, 21 Մայիս, 1902

## Դ Պ Ր Ո Ց

## ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Հրապարակախօսութիւն փրօֆ. Լ. ԺէՌԱՌ-ՎԱՌԷԻ,  
Տրփօնի Դպրութեանց Համալսարանէն)

—Շար. եւ վերջ, տե՛ս Հանաչարան, էջ 163—

## III

Դաստիարակութիւնը գոյացնուի. — Ոգեւորում  
յուզնան՝ դաստիարակի մէջ:

Ապացուցումի գործածութիւնը չի վաներ զգացումի կիրարկումը: Այս վերջինը կամքի ամէնէ ուժգին գրգռիչն է. կամքը ընտրութիւն մըն է, բայց ընտրութիւն մը բաղձանքներու միջեւ: Փրանսայի կրթական ծրագիրներու մէջ բարոյական դաստիարակութեան այս եղանակը բուսական շեշտուած է: Միայն թէ միսմինակ չի զարգանար: Անդադար սարսուռն զգայնութեամբ օժտուած բնութիւններ, զգայնութիւն՝ զոր իրենց խառնուածքը, ձեւը ու շեշտը սրտի գեղումներուն կ'ենթարկեն, բնական պերճախօսութեան կը նախատրամադրեն, այդ կարգի բնութիւններ թող թռիչ տան իրենց կարողութիւններու միայն: Իրենց խանդավառ ձայնը, իրենց եռանդոտ խօսքը մէկ անգամէն կը տիրեն ունկնդիրներուն. թանկագին յատկութիւն, հազուագիւտ ձիրք, որուն երբեք ուրիշ մը չի հաւասարիր: Բայց ասոնք բացառութիւններ են: Շատերու մէջ յուզումը պարզաներէն կախումն ունի. կեանքի սովորական ընթացքին մէջ, խառնուածքի որ եւ է պահեստ, կամ հպարտ եւ ամէն սիրոյ թշնամի երկչոտութիւն մը, կամ դարձեալ միտք մը որ կը յաւակնի մանաւանդ խնդիրներու մէջ պարզ տեսնել, հասկնալ ու բացատրել, կամ վերջապէս այն տեղը զոր կը գրաւեն աշխատութիւններ, ինչպէս դպրոցին մէջ հաշուի եւ քերականութեան

վարժութիւնները , որ բնաւին չեն շահագրգռեր սիրտը , բոլոր այս ազգակաները՝ որոնց կը բարգուռ օրուան յոգնութիւնը , միասին կ'ազգեն , կը սառեցնեն աւիւնը , կը մարեն եռանդը : Պէտք է ուրեմն կարգաւորել ոգեւորումը , եւ զայն տղուն մէջ ծնուցանելու համար , հարկ է նախօրօք կազմաւորել զայն դաստիարակին մէջ :

Դաստիարակին մէջ այս ոգեւորումը կարելի է պայմանաւ միայն որ իրեն ներքին կեանքի վր կազմաւորէ :

Ներքին կեանքը արհեստը չէ . չէ նմանապէս զօսանքը , թէիւ օրինաւոր եւ անհրաժեշտ արհեստին համար : Արհեստ , զօսանք մարդը իրմէն կը խլեն , զայն դէպի արտաքինը կը դարձնեն , զայն իրերու մէջ կ'ընկըղմեն , մէկը որքան միւսը կախարդանք մըն է : Ընդհակառակը ներքին կեանքը մարդով մարդուն ուսումնասիրութիւնն է . առիկա կեանքը չէ , այլ կեանքին վրայ նայուածքը : Համեմատ այն պատճառին որ զայն կ'առաջնորդէ՝ այդ նայուածքը կրնայ հակել անձնասիրութեան յաղթանակին կամ անոր հետ շիտթումին : Համերաշխ կը գտնուի , քանի մը վիզասաններու հետ , հետասպնդելու եղական վիճակներ , նօթագրելու «հազուապէս զբայնութիւններ» , այն ատեն կը կատաղեցնէ , մինչեւ մոլեգնութիւն , արժանապատուութիւնը : Բոլորովին ընդհակառակը կը քաջալերէ եւ կը հրահրէ վիճանձն զգացումները երբ կը հետամտի , ոչ թէ զմեզ զանազանող , զգուռ իրերուն , այլ անոնց որ մեզի ուրիշներուն կը մօտեցնեն , երբ , վերջապէս , կը հետեւի եւ նկատի կ'առնէ մարդկային սրտի բարախումները :

Բայց ներքին յայտնութեան այս սովորութիւնը ամենքին հասողութեան մէջ չի գտնուիր . ժամանակի պակասութեամբ , կամ դաստիարակութեան անհիմութեամբ շատեր անկէ զրկուած են : Բայց անոր համարժէքը կարելի է ստանալ անուղղակի միջոցով մը , այսինքն յաճախակի զբաղումով մը բարձր գրականութեան , մանաւանդ բանաստեղծութեան հետ :

Բանաստեղծութեան ազդեցութիւնը կրկին է . 1. արտաքսում եւ 2, ներշնչում : Իրեն յանդերով , ան կը շոյժ ականջը երաժշտական ձայնի մը նման . այդ վայրկեանէն , ինչպէս ամէն զգլխիչ զգացողութիւն , ան իրեն կը ձգէ հոգին ու ընդհակառակը կ'ոտնահարէ ամէն օտարոտի ըզ-

գացում: Մոզական ցուպի հարուածի մը պէս ան կը խազաղեցնէ եւ կը քնացնէ վիշտերը, անհանգստութիւնները, նախազգումները. ու այդ դերը կը վերանորոգուի, կը շարունակուի ամէն անգամ որ կը շարունակուի եւ կը վերանորոգուի յանգը:

Այդ ներգործութեան զուգընթացաբար, ուրիշ մը կ'արտագրուի. իր փոխաբերութիւններովը, իր նկարագրութիւններովը, բանաստեղծութիւնը կ'արթնցնէ պատկերներու երկար շարքեր, կը շրջագայեցնէ երազուն հոգին մտածումի անջրպետներու մէջէն: Զգացումի, կեանքի եւ նիւթի երեք թագաւորութեանց մէջ ստեղծելով շարունակական եւ մտերիմ յարաբերութիւններ, ան կը բանայ մարդկութիւնը բնութեան մէջ, ու այսպէս զայն ցոյց կուտայ իբր խոշորացոյց հայելիի մը մէջ:

Միւս կողմէ, բանաստեղծութեան կրթութիւնը դիւրին է եւ քաղցր, ամէնքին մատչելի ան հրապուրանք մը եւ հանդիստ մըն է: Նախ, փոփոխականութիւնը անոր հետ դիւրին է. հին ժամանակներէն նորերուն կ'անցնուի, յոյն բանաստեղծներէն, որ աւանդութեան կ'ենթարկուին. 18րդ դարու մեծ գասականներուն, Ֆրանսայի հոյակապ քնարերգութեան: Քոռնէյլ, Ռասին, Լա Ֆոնթէն, Շաթոպիան, Լամառթին, Վինետի, Միշլէ, Վ. Հիւկո, ասոնք բոլորը զգացումի եւ երազի աշխարհ մը կը կազմեն:

Երկրորդ, բանաստեղծութեան հետ առեւտուրը կը պահանջէ յաճախակիութիւն եւ չափաւորութիւն: Ամբողջ ժամեր ընթերցումներ ամէն անգամ անհրաժեշտ չեն. ընդհակառակը միտքը խիստ կ'ամփոփուի ոտանաւորի կարճ կտորով մը, գեղեցիկ էջերու փոքրիկ թուով մը: Այս տեսակէտով բանաստեղծութիւնը կրօնքին հետ խորին նմանութիւն մը կ'արտաբերէ: Կրօնքին մէջ, աղօթքը, պաշտամունքին զլխաւոր տարրը, միայն քանի մը վայրկեան կը տեւէ: Նմանապէս իւրաքանչիւր օր, կամ եթէ ոչ իւրաքանչիւր օր, շաբաթը շատ մը անգամներ, երբ օրուան հոգը աւարտած է, քանի մը վայրկեաններ՝ նըւերուած գեղեցիկ բանաստեղծութեան մը, պիտի առնին շահեկանութիւն եւ ուրախութիւն:

#### IV

Յուզման ոգեւորուելը սյուն մեջ

Բանաստեղծութիւնը կը սնուցանէ եւ կը կենդանացնէ

զգացումը, ոչ միայն դաստիարակին՝ այլև տղուն մէջ՝ Սաղայն ինչ ինչ նախազգուշութիւններ հարկաւոր են. ինչպէս ամէն յարատեւ գործի մէջ, մեթոտը կարեւոր է։ Կարելի է, այս առթիւ, ցոյց տալ եթէ ոչ կանոններ, բառը խիստ յաւակնոտ պիտի ըլլար, գոնէ նկատողութիւններ։

Դաստիարակին համար գործածական առաջին եղանակը բանաստեղծական հատընտիր կտորներու տպագրուած հաւաքածոն է։ Օգտակար է, մանաւանդ սկսնակներուն, եւ կ'առաջնորդէ ընտրութեան մէջ՝ զոր ինքնին կարելի է ընել ուրիշ ընթերցումներէ։ Բայց այս բանը շատ մը անյարմարութիւններ ունի, անդադար գործածուած եւ առանց ուրիշ հաւաքածոյի դիմելու, միեւնոյն կտորներու շուրջը կը պտուտկի յաճախ, որոնք, դասասուին համար, անհրապոյր կը դառնան, ինչպէս շատ ծանօթ եղանակներ։ Այդ պահուն անձնական ընթերցումները անհրաժեշտ են, որոնք արդէն եղած են, ինքզինքին մէջ հոգոյ թարմութիւնը պահպանելու համար, պիտի հայթայթեն դարձեալ տղոց գործածութեան յատուկ միշտ նորոգուած շտեմարան մը։ Բայց պէտք չէ զանոնք անընդհատաբար ներկայացընել։ Տարիքին նկատի առնուիլը հոս իր արժէքը ունի։ Երկու կարգի ընթերցումներ կան. 1, վերլուծումներ եւ նկարագրութիւններ, 2, վիճակներ եւ տեսարաններ։ Ընդհանրապէս պէտք է առաջինները հեռացնել որ երկրորդական կրթութեան եւ չափահասներու կը պատկանին, ու պահել այն կտորները որ մարդ, անասուն եւ առարկայ միջադէպերու որոշ մրցակցութեան մը մէջ կը ներկայացնեն, պէտք է ուրեմն մանաւանդ դիմել առակին, պատմութեան, առամին եւ գիւցազներգութեան։

Ստուգաբանութեան կ'ընկերանայ անհրաժեշտաբար ընթերցումը։ Այդ պահուն երեւակայական շատ մը շփոթումներ եւ դժուարութիւններ կը կազմալուծեն դաստիարակին բարի կամեցողութիւնը։ «Ստուգաբանութիւն» բառը ամէն կողմ ունի չեմ գիտեր ինչպիսի խորհրդաւոր երեւոյթ մը, ու խիստ յաճախ մարդ կը համոզուի թէ ան կը պահանջէ մտքին, մարմնոյն մէկ հիացական (extatique) վիճակը։ Բացազանչութիւններու, միացած ձեռքերու եւ ջղային տագնապներու մանկավարժութիւնն է այդ բանը։ Եւ որովհետեւ յաճախ ի պահանջել հարկին տագնապը կը

պակսի, ստուգաբանութիւնը կը նսեմանայ ամէնէ ցուխտ տափակութեան մէջ: Պիտի յաջողի երբ պարզապէս բացատրութեան մը մէջ պարփակուէր: Վիճակ մը հասկցնելու համար անկէ արտաբերելու է, առանց անոր յաւակնելու, նոյն իսկ իրերու ուժովը, յուզումը եւ կեանքը:

Օրինակի համար ընտանիքի զգացմանց խորութիւնը կուզուի ըմբռնելի ընել, ատոր կարելի է հասնիլ Աքիլլէսի առջեւ ծնրադիր Պրիամոսի աղաչանքով: Երբ միայն կարդացուի, չպիտի շահագրգռէ ունկնդիրը, մտնաւանդ անտարբեր մանուկը: Արդ, զայն ստուգաբանել կը նշանակէ զայն շրջապատող դէպքերու եւ մարդոց շրջանակը վերակազմել, այսինքն ներկայացնել Յոյները իրենց բարբարոս բնաւորութեամբ, տակաւին անձանօթ զթութեան եւ անարդարութեան սովորութեանց, մանաւանդ պատեւրազմի մէջ, կիներու, տղոց եւ ծերերու հանդէպ վրէժխնդրութիւնը, Պրիամոս այդ վայրկեանէն ենթակայ ամէնէ ծանր վտանգին, իր ծանօթ դիմումը կ'ընէ վսեմ մուկնութեան մը համար, ծերունի մը որ կը վտանգէ իր կեանքը, ո՛չ թէ ազատելու համար իր զաւակը մահէ, այլ պարզապէս անոր մարմինը, որ կը խոնարհեցնէ իր սպիտակ մօրուսը պատանիի մը առջեւ, որ կը խոզխոզէ օտարի մը առջեւ իր թագաւորական հպարտութիւնը, որ վերջապէս, գերմարդկայի՛ն զոհողութիւն, կը համբուրէ տակաւին բոլորովին արիւնոտ ձեռքերը իր որդւոյն ըսպաննիչին:

Այս ընթերցումները դասերու հետ պէտք է մնան անբաժան: Հոս կը բաղխինք բարոյական դաստիարակութեան էական կէտի մը: Կը պատահի, շատ անգամ, որ դաստիարակները իւրաքանչիւր հարցում բոլորովին որոշ ու անկախ ամբողջութիւն մը ըմբռնեն: Ներկայ դասը անտեսել կուտայ նախորդները եւ չի պատրաստեր ոչ մէկ կերպով յաջորդները: Դասընթացքը կը դառնայ այսպէս անկապակից համբիջ մը, իբր բեռնակիր երկաթուղի մը, որուն վակոնները, սեսակով տարբեր, իրարու մօտեցած են դիպուածաբար: Այս կէտը սեսած էին Ստոյիկեանները: Բաւական չէ պարտականութիւններ տալ, զանոնք համբուրել, պէտք է միասին կապել, այսինքն զանոնք լուսաբանել, զօրացնել՝ մէկը միւսով:

Դեռ աւելին կայ. բաւական չէ անոնց մէջ նմանու-

թիւն առաջ բերել, ցոյց տալ թէ, օրինակ, անէն պարտիք դէպի իր անձը՝ ուրիշի հանդէպ եւս պարտականութիւն մըն է, թէ այսինչ նշանակելի սովորութիւնը, ինչպէս զրպարտութիւնը, կը գաւակցի այնինչ աղետաւոր ունակութեան հետ, ինչպէս մոլիոսանդութիւնը, պէտք է դարձեալ որոշել ուղղութիւնը այդ յարաբերութեանց, այսինքն պարտականութեանց աստիճանաւորումը եւ համերաշխութիւնը: Արդ ահաւասիկ ինչ բանի կը ծառայեն յարմար կերպով կարգաւորուած ընթերցումները: Օրինակի համար գիտենք որ դէպի հայրենիքը պարտականութիւնները կը դերազանցեն դէպի ընտանիքը տածուածները եւ դէպի մարդկութիւնը պարտականութիւնները կը դերազանցեն դէպի հայրենիքը տածուածները: Բայց ոչինչ կ'արժէ զայդ ըսելը ու նոյն իսկ կրկնելը: Իրապէս այդ համերաշխութիւնը զգալի ընել տալու եւ զայն շօշափելի դարձնելու շուրջը կը գառնայ խնդիրը: Ընդունինք հիմա որ կարգաւորով Պրիամոսի ազաչանքը կամ նմանօրինակ որ եւ է տեսարան, մտքին մէջ ծնուցած ըլլանք հայրենի գերազանց գաղափարը, ո՞րպիսի տպաւորութիւն չպիտի արթընցնենք կարգաւորով եւ բացատրելով յետոյ Քոռնէյլի ծերունի Ովրատիոսի պարագան, այսինքն մարդու մը որ պատրաստ է ի հարկին զոհուիլ իր գաւակներուն համար եւ որ կը զոհէ իր գաւակները իր երկրին համար: Նմանապէս, Միշըլէի այս կամ այն էջը ընտրելով, պիտի հաստատուէր թէ մարդկութիւնը բարոյական տեսակէտով բարձր է քան հայրենիքը:

Բարոյագիտութեան դասընթացք մը, որ վարժապետանոցի մէջ լսուած դասերու միայն պարզ կրկնութիւնը պիտի ըլլար, կրթութեան ամէնէ նուաստը պիտի հանդիսանար: Սրտովին, ներշնչումով եւ խելացի ընտրանքով դասերը, կենսական կարեւորութիւն ունին: Ու այդ ներշնչումը ձեռք բերելու համար հետեւելու է այն մեթոտին զոր ցոյց տուինք:

## ՄԱՐՄՆԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Տարափոխիկ հիւանդութիւններու համաճարակը արգիլելու համար՝ բանական չէ միայն բժշկական, հականեխական եւ ուրիշ նմանօրինակ միջոցներու դիմելը: Հարկաւոր է այդ ակտերու անընդունակ միջավայր մը ստեղծել՝ ամէն վայրկեան ապահովելով անհատին մաքրութեան պայմաններ, այնքան անոր մարմնոյն համար որքան բընականօրէն վայրերու մէջ: Միշտ տեսնուած է որ փոխանցելի հիւանդութիւնները անհամեմատ խոշոր նախճիւրներ կը գործեն եւ կը վարակին ապառոզ տեղերու եւ ազատու մարդոց մէջ:

Մարմնական մաքրութեան հոգ տանելը ո՛չ միայն ախտարգելական միջոց մըն է, այլեւ բարեկեցութեան եւ բարգաւաճման: Մորթը իբր ներքին այրումներու կանոնաւորիչ գործի եւ որուն լաւ պաշտօնավարութիւնը այնքան տիրական արժէք մը ունի շնչառութեան վրայ, պէտք է մաքուր պահուի յահախակի լուացումներով: Քոսմետիկները (մորթը կակղցնող բաղադրութիւններ) պատրաստութիւններ են որոնք կը բարեփոխեն մորթին գործառնութիւնները, եւ որոնք կը յաւակնին աւելցնել եւ պահպանել դեղեցկութիւնը, գոնէ առեւտրութեամբ: Կան սակայն օգտակար քոսմետիքներ, ինչպէս աճառը որ կ'ազատէ մորթը, վրան փակած արտաթորումի մնացորդներէն. արդուզարդի ֆացախները, որոնց գործածութիւնը պէտք չէ չափազանցել, ծառայութիւններ կրնան մատուցանել եթէ յարմարապէս ջրախառնուին, այդ պարագային կը մաքրեն մորթը, թարմութիւն կուտան անոր եւ կը բնական դիմադրել կարգ մը թեթեւ բորբոքումներու:

Խոյս պէտք է տալ բոլորովին այն նիւթերէն որոնք դէմքին վրայ կիրարկուելով, իրենց բաղադրութեան համաճայն կը ստեղծեն հոն կեղծ գոյներ եւ վտանգի կ'ենթարկեն անվրիպելի կերպով մորթին բնական կենդանութիւնը եւ փափկութիւնը: Խիստ չատերը, այդ նիւթերէն, կը պարունակեն թոյներ (ւնդիլ, կապար, ւկնդեղ), ոոյն

իսկ սու-նիթուսք սը պիսիսք)։ Գունաւորումի այս եղանակները կը մօտեցնեն քաղաքակրթուած ընկերութիւնները վայրենի ցեղերու, ու իրենց անկման պահուն էր որ Հռովմայեցիները փայլեցան այդ պատրաստութիւնները ճոխացնելու եւ գործածելու արուեստին մէջ։ Նոյն իսկ Աթենացիներուն մէջ, որոնք թէեւ կը ճանչնային քոսմէթիքի ամէնէ կատարելագործուած աղբիւրները, որոնք կը գործածէին գեղեցիկ սեւ գոյն մը (հաւանօրէն հիւնան), իրենց յօնքերուն աւելի փայլ տալու համար, գոյութիւն ունէր, շպարներու շարքին մէջ, գործածութիւնը անարկու սպիտակագիլին (blanc de céruse)։

Գլխի մաքրութիւնը մասնաւոր խնամք կը պահանջէ, խուսափելու համար կարգ մը մարդոս մորթի հիւանդութիւններէ, ինչպէս գոնջուրեան (teigne) զանազան տեսակներէն։ Գարոցին մէջ շաքաթը անգամ մը դաստիարակները, տան մէջ ամէն օր ծնողքները պէտք է աչքէ անցնեն տըղոց գլուխը։ Մանչերը ընդհանրապէս կարճ մազեր ունենալով բաւական է զանոնք բթամատով վեր առնել ու մատը անոնց պառկած կողմին հակառակը պատցնելով հասկնալ մէկ ակնարկով գլխին վիճակը։ Աղջիկներու գլխին մաքրութիւնը քննելու համար, որոնք երկար մազեր կը կրեն միշտ, պէտք է բոլոր մազերը գլխին վրայ ամփոփել ծոծրակը տեսնելու, որ ոջիկներու նախընտրած վայրն է, գտնելով հոն ապահով պատսպարան մը։ Յետոյ, բութ գաւազանիկով մը պէտք է դծեր բանալ մորթին վրայ տեղ տեղ, դիտելու համար թէ այս վերջինը մաքուր է։ Թուխ աղջիկներու վրայ մորթը պէտք է մոխրագոյն ըլլայ, եւ տփգոյն ու թեթեւ կերպով վարդագոյն շէկ կամ շագանակագոյններու վրայ։

Յաճախ գէշ խնամուած տղոց վրայ թեփ կը գտնուի, մանաւանդ գլխի վերին մասին մէջ, երբեմն քերթուածքներ եւ փոքրիկ կոշկոռներ ականջներուն ետեւ եւ այս վերջիններու գանկին միացած կէտին վրայ։ Մաքրութեան խնամքներ, գաղջ ջրով լուացումներ, որոնցմէ վերջ լաւապէս կը սրբուի մորթը, յաճախ բաւական են այդ թեփերը անհետացնելու։ Թեփերը յաճախ կ'առաջնորդեն ոջիկներու ներկայութեան. այս վերջինները պահուած մազերու արմատին տակ, կրնան ծածկուած մնալ վերիվերոյ քննութեան մը. իրենց հաւկիթներու գոյութիւնը, որոնք

ծանօթ են անիծ (lente) անուան տակ, աւելի դիւրին է ճանչնալ. փոքրածաւալ եւ գորշագոյն կէտեր են ատոնք, որ մազերուն կը փակչին, որոնց վրայ հաստատապէս ամբացած են փոքր օղակով մը, ինչ որ զանոնք կը տարբերէ հասարակ թեփէն. դարձեալ այս վերջինը ձեռքի, խոզանակի կամ սանտրի պարզ շփումով մը կը թափի:

Միջատասպան փոշիի մը կամ քացախային ջրի մը գործածութիւնը, եթէ ազաքները վերքեր չունին, բաւական է ոջիլները ջնջելու: Միևնոյն խնամքները ժամանակ մը պէտք է շարունակուին երբ արդէն ոջիլ այլեւս չի գտնուիր, մինչեւ որ բոլորովին ապահովուի թէ մազերու վրայ կպած հաւկիթները նոր արտադրութիւններու անընդունակ դարձած են:

ԼՈԳԱՆՔ. — Հեղուկ, հաստատուն, շոգիացեալ եւ կաշային մարմիններու մէջ բաւական երկար թաղում մը կը կոչուի յոգանք:

Հեղուկ միջավայրի մէջ լոգանքը կրնայ կատարուիլ զանազան բարեխառնութեանց մէջ:

Ցուրտ յոգանք. — Պաղ ջուրը մարմնոյն ջերմութենէն մաս մը կը նուազեցնէ, ու, երբ վաղուն է՝ ջուրի շարժումը միշտ նորոգելով իր շինումը մարմնոյն հետ՝ յառաջ կը բերէ աւելի խոշոր պաղութիւն մը, որ կը բացատրէ այն իրողութիւնը թէ ամառը երբ դետակներու բարեխառնութեան ատոիծանը զգալապէս չի տարբերիր մըթնորոտի բարեխառնութենէն, լոգանքը դարձեալ ցուրտ կը թուի: Լոգանքը այնքան աւելի ցուտ կ'երևի որքան ջուրին մէջ անշարժ կեցուի: Ցուրտին մորթին վրայ ըրած ազդեցութիւնը տեղի կուտայ ամբողջ գործարանաւորութեան մէջ երեւոյթներու յաջորդութեան մը, զոր հիմա աչքէ պիտի անցնենք:

Առաջին ներգործութիւնը, որ կը յայտնուի, մարմնոյն ներսերը մղուած հեղուկներու առաջ բերած զգայնութիւնն է, ընկերացած դժուարաչնչութեամբ: Մորթը կը գունաթափի, ու գողցողում, սրտիւք ու փշիշուռ (chair de poule) կը պատահի: Այս տեսակ ընդհանուր գրգռումի մը կը յաջորդէ հանդարտութեան չրջան մը. մորթին գունաւորումը կը վերելի, ու սրտի բաբախումները կ'արագանան: Եթէ պաղի ազդեցութիւնը երկարացած է, վերջստին ընդհանուր գողցողութի մը վերելիլը կը տեսնուի,

որ ետիրորդ արսխանֆ անունը կը կրէ: Պէտք է խոյս տալ այս երկրորդէն. ցոյց կուտայ թէ մարմինը խիստ երկար ատեն ցուրտի ազդեցութեան ենթարկուած է եւ թէ այս վերջինը յաղթող կը հանդիսանայ այն կռիւին մէջ որ տեղի կ'ունենայ իր եւ գործարանական ուժերուն միջեւ:

Երբ այս վերջի վայրկեանէն առաջ լոգանքը կ'աւարտի, մարդ կը զգայ շարք մը երեւոյթներ, որոնց հակազդեցութիւն անունը տուած են: Քաղցր տաքութիւն մը կը սկսի ամբողջ մարմնոյն մէջ ծաւալիլ, մորթին վրայ կը յայտնուի խիստ կենդանի գոյն մը: շնչառութիւնը կը լինի լիաթոք եւ դիւրին, շրջանառութիւնը կ'արագանայ, դնդերները ուժ կը ստանան, ու բոլոր գործարաններու մէջ աւելի փափկութիւն եւ ուժ կը զգացուի քան թէ լոգանքէն առաջ: Այդ հակազդեցութեան կատարմանը կը նըպաստեն չափաւոր մարզանքը եւ բարեխառնութեան բարձրացումը այն միջավայրին մէջ, ուր ան կը կատարուի:

Այդ երկու պայմանները հաւասարապէս օգտակար են լոգանքէն առաջ. բայց պէտք չէ մարզանքը մինչեւ յոգնութեան տարուի. գործարանաւորութիւնը այդ ատեն բաւական ուժ չպիտի ունենար հակազդեցութիւն առաջացնելու համար: Այսօր լաւ հասկցուած է թէ որ եւ է վտանգ չկայ խորասուզուիլ պաղ ջրի մէջ երբ մարդ խիստ տաքութիւն ունի եւ նոյն իսկ քրտնած է: Ռուսական եւ թրքական լոգանքներու առօրեայ գործածութիւնը գոհացուցիչ ապացոյց մըն է: Մարմնոյ տաք կամ քրտնած վիճակէն պէտք չէ վախնալ, այլ անոր չափազանց յոգնութեանէն:

Ընկղմումը, այդ պայմաններու մէջ, ընդհակառակը, քրտնաթորութեան վախճան մը դնելու առաւելութիւնը ունի՝ թարմացնելով մարմինը եւ տալով ջերմութիւնէն թուլացած մորթին իր բոլոր առուզութիւնը:

Առողջապահական սկզբունքներու հակառակ է մերկ մարմնով սպասել՝ քրտինքը չորցնելու համար, ջուր մտնելէ առաջ. որովհետեւ ցուրտ առնելով գործարանաւորութիւնը նուազ տրամադիր կ'ըլլայ հակազդեցութեան պատշաճապէս կատարուելուն:

Վերջապէս, չափաւոր մարզանք մը, քիչ բարձր բարեխառնութիւն մը լաւագոյն միջոցներն են պատրաստուելու համար պաղ ջրի մէջ ընկղմումի մը:

Գաղջ լոգանք . — 30° էն 33° աստիճան ջուրի մէջ՝ լոգանքները կը հանդարտեցնեն ջրային գրգռումները , եւ կ'արտադրեն ընդհանուր հանգստութիւն մը , հեռացնելով մարմինէն այն յոգնութիւնները զոր նա կրած էր : Երբ լոգանքը երկար տեւէ եւ յաճախակի կրկնուի կրնայ նիհարութեան առիթ տալ :

Գաղջ լոգանքի գլխաւոր դերն է լուալ մարմինը , զայն ազատել զինքը ծածկող արտաթորումներու մնացորդներէն : Կուտայ մարմնոյն փափկութիւն եւ առաձգութիւն . մէկ խօսքով , զայն աւելի ընդունակ կը դարձնէ իր պաշտօնավարութեան , որ այնքան անհրաժեշտ է առողջութեան պահպանումին : Կը կազմէ ուրեմն առողջապահութեան համար թանկագին աղբիւր մը : Մաքրութեան սահմանուած լոգանք մը 20 վայրկեանէ աւելի տեւելու չէ :

Տախ լոգանք . — Տաք լոգանքի բարեխառնութիւնը 35 աստիճանէն աւելի կ'ըլլայ : Կ'արագացնէ սրտի բաբախումները եւ բազկերակի զարկը : Խիստ տաք եւ խեստ երկար տեւած պահուն , կրնայ վնասել առաջ բերել . կրնայ նըմանապէս ներքին գործարաններու արեւակոտում (congestion) պատճառել : Խիստ տաք լոգանքը 10-15 վայրկեանի մէջ սովորապէս գլխի ծանրութիւն , թմրութիւն , գլխի պտոյտ , եւն . կ'առթէ : Տաք լոգանքի յաճախութիւնը եւ երկարատեւութիւնը գործարանաւորութեան վրայ նիհարեցուցիչ զգալի ներգործականութիւն մը ունի : Առողջապահական տեսակէտով պէտք է խոյս տալ այդ կարգի լոգանքներէ :

Բաղանիք , ռուսական եւ քրֆական լոգանք , եւ այլն . — Ջերմատուները կամ բաղանիքները սրահներ են որոնց մէջ հիւանդները (կամ առողջները) կ'ենթարկուին խոնաւ կամ չոր շոգիի շփման : Խոնաւ ջերմատուները կամ շոգիի լոգանքը զօրւոր գործօն մըն է քրտնաբերութեան : Փոյսցած քրտինքը մարմնոյն կը պատճառէ կորուստ մը որ կրնայ հասնիլ 400 եւ բացառապէս 800 կրամի : Երբ յաճախ կրկնուին՝ շոգիի լոգանքները կրնան պատճառ դառնալ ծիւրումի : Որպէսզի մարմինը կարող ըլլայ հակազդել շոգիի սկարացուցիչ հետեւանքներուն դէմ , երեւակայած են սաքրութեան գործածութիւնէն վերջ մարմինը պաղ ջրի ցնցուղաւոր կամ պարզ լոգանքի ենթարկել : Այս եղանակն է զոր անուանած են ուսական բաղանիք :

Չոր բազմիքները սրահներ են դարձեալ որոնց ջերմութեան աստիճանը աւելի բարձր է եւ կրնայ մինչեւ 100 աստիճանի տարուիլ : Այս ջերմատունները կը քրտնցնեն, կ'արագացնեն բազկերակը, կը տաքցնեն մորթը, բայց զգալապէս չեն ներդրածեր շնչառութեան վրայ : Երբ անհոգութեամբ գործադրուին այս կարգի լոգանքներ՝ վըտանգներ ունենալէ զերծ չեն :

Տաք շոգիով բազանիքը ջղային անհատներու կուտայ գեր-գրգռութիւն մը : Կարող է, ուղեղային գրգռում մը արտադրելով, պատճառ դառնալ գլխի պտոյտի եւ մարուկի : Օգտակար է այդ պահուն եւս մարմինը ենթարկել պաղ ջրի. շոգիի այս կարգի բազանիքներ հիմը կը կազմեն թրքական լոգանքներու :

Ջրաբուժութիւն . — Յնցող, շուացում, եւ այլն . — Ջրաբուժութիւնը եւ իր զանազան գործածութիւնները նկատուած են առողջապահական իբր առաջնակարգ ազդակներ, եւ ընդունուած հետզհետէ՝ ամէն անոնցմէ որ իրենց առողջութեան հոգ կը տանին : Որովհետեւ ջրի գործածութիւնները դիւրին են եւ կը կատարուին վաղընդփոյթ : Բազանիքներու զանազան դրութեանց անյարմարութիւնները չեն ներկայացներ, որոնք յաճախ յոգնութիւն եւ փամանակի կորուստ կը պատճառեն : Գործադրուած ցընցուղի, լուացումի, ընկղմումի ձեւերուն տակ, պաղ ջուրը, միայն թէ իր կիրարկումը երկար չտեւէ, ուժ եւ փափկութիւն կուտայ դնդերներուն եւ կ'արագացնէ գործարանաւորութեան զանազան պաշտօնավարութիւնները :

Ամառը, պաղ ջուրը թանկագին օգնական մըն է հեղձուցիչ տաքութիւններու գէշ հետեւանքները արգիլելու համար : Չմեռը, սեպհական ջերմութիւնը հաւասարակը՝ ութեան մէջ կը պահէ, ներքին այրումները շտապեցընելով : Դարձեալ պաղ ջուրի առօրեայ գործածութեան մեծ օգուտներէն մէկն ալ այն է որ կը վարժեցնէ մարմինը կրել առանց վտանգի բարեխառնութեան յանկարծական եւ ոստոստուն փոփոխութիւնները :

ՆՇԱՆ

Փարիզ 28 մայիս 1902

## ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ ԵՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Տես Հանդիսարան, էջ 176 թիւ 5-6)

26. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ և ԾՆՆԴԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ. — Փարիզի վիճակագրական ընկերութեան մէջ պ. Ալֆրէտ Նէյմանը՝ իր կարգացած մէկ ուսումնասիրութեան մէջ, կը քննէ ծննդականութեան քաղաքակրթութեան ծաղկումին հետ տկարանալու պատճառները, որոնք բնախօսական ըլլալէ գրեթէ կը դադրին եւ կը շեշտուին տնտեսական, ելեւմտական եւ ընկերական պայմաններու մէջ: Դերմանիոյ մէջ 1875ին ծննդականութիւնը 42 առ 1000 էր, մինչ 20 տարի յետոյ 36 առ 1000ի իջած էր: Նմանապէս Անգլիոյ մէջ այդ ժամանակամիջոցին 36էն 29ի իջած է. Ֆրանսայի մէջ ալ 26էն 25, 2ի:

Տնտեսական պատճառներու մէջ, որոնք մեծապէս կը նպաստեն ծննդականութեան տկարանալուն կը յիշէ հետեւեալները.

1. Կեանքի սղութիւնը կամ պէտքերու յաւելումը. «Մարդս ենթակայ է ամէն ժամանակ աւելի բաղձանքներու գոր չէ կարող գոհացնել եւ թէ իր եկամուտը կը սահմանաւորէ իր սպառումը:» — 2. Իր եւ իրեններուն աւելի բարեկեցութեան համար բաղձանքը: Միշտ նկատի կ'առնուի ընտանիքի մը առթած ծախքերուն մէջ տրամադրուած գումարները. թէ որքան պէտք է արժեն տղոց դաստիարակութիւնը, կրթութիւնը, ապրուստը եւ վերջապէս զանոնք ապագային գործի մը դնելու հոգը. ու հայրը կը սահմանաւորէ իր բարգաւաճումը իր ինքնասիրութեան չափով: — 3. Քանի որ տղայոց կարելի բարեկեցութիւնը ի նկատի կ'առնուի, ապրելու եւ յարասեւելու կեանքի ծանր պայքարին մէջ, մարդս կը բաղձայ պահպանել իր հարստութիւնը ու չի ցրուեր զայն՝ բաժնելով բազմաթիւ ժառանգորդներու մէջ: — 4. Դրամագլխի եկամուտին արկարացումը: — 5. Տուրքերու բարգումը, որ կը սպառնայ անհատին վայելել հանդարտօրէն իր ժառանգութիւնը, զայն կը մտատանջէ իր եւ իրեններուն բաղձին վրայ, ինչ որ մեծապէս կը ներգործէ ծննդականութեան վրայ: — 6. Ֆեհիլնիզը կամ կնոջ մերձեցումը սի միայն մարդուն վերապահուած աշխատութիւններուն եւ զբաղումներուն:

կինը կը դառնայ հետզհետէ աւելի աշխատող, կը զբաղի առեւտուրով եւ ճարտարագործութեամբ, ազատ արհեստներով, հանքերու, գործակալութեանց եւ ներկայացումներու մէջ: Այդ աշխատութիւնները Ֆրանսայի մէջ կը հաշուեն 3,353,831 կին, որոնք թերեւս աւելի քիչ կը մտածեն իրենց մայրական պարտքերու վրայ, քան թէ արհեստական զբաղմանց: Անոնցմէ դուրս կարելի է յիշել ամբողջ բնակչութիւն մը որ գրեթէ զաւակ չունի, 1896ի թուահամարին մէջ ստուգուեցաւ որ 25 տարեկանէն վեր կը գտնուէին 3,861,599 ամուրիներ, 1,808,838 առանց զաւակի ընտանիքներ, 3,000,000 ամուսնալոյծներ, այլիններ առանց զաւակի՝ ընդամէնը 5,970,437:

Ու տղայ չունենալու ձգտումը արգասիք է աւելի նախապաշարուածի մը որով շատ-շատեր կը կարծեն բազմաթիւ ընտանիքով մը դժբաղդ նկատուելի: Աշխատող մարդը սակայն պէտք է խուսափէ այդ օրինակ մտածումներէ, որովհետեւ բարեկեցութիւնը եւ արտադրութիւնը աշխատանքով միայն հասկնալի են: Դարձեալ աշխատող մարդը կը գտնէ յաճախ իր ընտանիքին մէջ ամէնէ ազնիւ կազդուրանքը ինամելու համար իրենները եւ զանոնք զարգացընելու իր առօրեայ վաստակովը: Ու, խիստ յաճախ, զաւակ մը իր իմացականութեամբ ու գործունէութեամբ խիստ կը փայլի՝ երջանիկ եւ բարեկեցիկ ընելու համար բազմաթիւ ընտանիք մը, որուն կեանքը տեւած է պայքարի եւ յոգնութեան մէջ: Իբր եզրակացութիւն՝ ծննդականութիւնը նկատելու է՝ պ. Նէյմաուքի հետ, կամքի, հեռատեսութեան եւ անհեռատեսութեան խնդիր մը: Չաւակ չունին որովհետեւ չեն ուզեր, եւ որովհետեւ այն ուժերը որ կը գործեն կամքին վրայ, կը կազմեն շահը, պարտիքը, բնազդը կամ կիրքը. ծննդականութիւնը կը գտնուի այդ ուժերու ազդեցութեան տակ, որ կը ներգործեն կամեցողութեան վրայ եւ որոնց տնտեսական ուսումնասիրութիւնը ցոյց կուտայ անոնց գերակշիռ կարեւորութիւնը:

27. Ժանսախսը Օսկայի մուկերուն մեջ. — Փարիզի բժշկական ակադեմիային Օտէսայէն հաղորդուած է թէ 1901ի հոկտեմբեր ամիսէն սկսեալ չորս անդամ ժանտախտի ցպիկներ գտած են այդ նաւահանդիստը հասնող նաւերու ընտանի մուկերուն մէջ: Նաւերու վրայ պէտք է գիտնալ որ միայն ընտանի մուկեր զոյութիւն ունին: Միւսնոյն

ժամանակ քաղաքին մէջ ստուգուած է որ կոյանոցի մուկեր ժանտախտէն բռնուած են եղեր: Այս վերջիններուն ժանտախտը սահմանափակուած է որոշ տեղերու մէջ, առանց ծաւալման եւ որ եւ է ձգտումի: Այդ կարգի սահմանաւորուած վառարաններու գոյութիւնը թոյլ կուտայ ենթադրել թէ ժանտախտի ցարկը չի փոխանցուիր կոյանոցի մուկէ մը ուրիշ կոյանոցի մուկի մը, եթէ ոչ կեզտոտած սննդական նիւթերու միջոցաւ: Կարելի է մտածել նաեւ թէ թերեւս այսօր Եւրոպայի անընդունակութիւնը ժանտախտի դէմ, հետեւանք ըլլայ կոյանոցի մուկերու գրեթէ անըզգայութեան այդ հիւանդութեան հանդէպ, մուկեր՝ որ բազմաթիւ են այժմ Եւրոպայի մէջ:

28. Կայծակիկ պսակաւու յարիկներ. — Միացեալ-Նահանգներու մէջ տասնըմէկ տարիէ ի վեր կը կատարուին խուզարկութիւններ ստուգելու համար այն արկածներու թիւը, որոնք պատահած են մարդոց՝ կայծակի հետեւանքով: 1900ին 713 անձինք կայծակնահար եղած են՝ որոնց 291ը դաշտին, 158ը բնակարաններու մէջ եւ 57ը ծառերու տակ: 973 միայն վիրաւորուած են՝ 243ը դաշտին, 327 տուներու մէջ եւ 29 ծառերու տակ:

Փոթորիկներու մեծամասնութիւնը կը պատահի ամառը, բայց հազուադէպ չէ նմանապէս անոնցմէ դիտել նաեւ ձմեռը՝ Մեքսիկայի ծոցին շրջակայքը, Մասաչուսեթի մէջ եւ Ատլանտեան ովկիանոսի եւեւրքներուն վրայ:

## ՎԵՐՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՀԱՅՆԵՐԷՆ ԹԵՐԹԵՐ ՈՒ ԳՐՔԵՐ

—\*—

ԱՐՏԷՄԻՍ. — Բաւական գրեցինք գրականութեան անունով, բաւական խօսեցանք կրթութեան հմայքով, շատ երգուընցանք լոյսի ու ճշմարտութեան տաճարին մէջ. բայց արդեօք գրի՞նք մեր տրամադրութիւններուն մէջ անկեղծութիւն, ու մղեցի՞նք թելադրականութիւնը մինչեւ հոն, ուր ոչ թէ դատարկ խօսքը պիտի հնչէր, այլ ինքնիմաց ձայնը փրկարար՝ խարանելու հողիներուն վէրքերը, ու կենդանացնելու կեանքը յառաջընթաց շարժումով մը: Ու այդ ուժը չի ծագիր թաքուն ձգտումներու, կամ կոչումի անկարողութեան սարսուռներէն ու կը մնայ մարդը

կեանքի յաւելուածական պատկերներու անհաճոյ կրկնութիւններուն ենթակայ, ու անոր միօրինակութենէն շեղումը յետագարձ ոգեւորումի լքումը կ'երկնէ իր մէջ :

Արեւիսը կարգացողը միեւնոյն տպաւորութեան տակ կը գտնուի : Կը պակսի հոն անկեղծութեան ոգին, կ'արձանանայ հոն միջակութեան սփինքսը, կը զգացուի հոն կնոջ բազը բարելաւելու ատակ ձեռքին չգոյութիւնը, կը բրգանայ հոն խել մը անկարողներու սովորականութիւնը : Բան մը չ'ըսեր ան, բան մը չի խոստանար թէ եւ մեծ ծրագիր ունի : Չեւական փայլ մը կը տիրէ անոր մէջ, բայց կը քնացնէ երեւակայութիւնը, կը բթացնէ միտքը, «կը պոռնկացնէ» զգացումը : Ստեղծագործող շունչը տեղի տուած է հասարակին, գեեթիկին, անիմաստին եւ անկարելիին : Դադափար մը կը տատանի հոն խոնոզ գրութիւններու մառախլապատ մթնոլորտին մէջ, գազափար մը՝ որ ինքնին իրականութիւնն է կամ անոր մէկ երեւոյթը. «բարելաւել կնոջ վիճակը» առանց բարելաւուելու որ եւ է միտում ցոյց տալու, բարելաւուած կարծելով կամ կեղծելով ինքզինքը : Եթէ Արեւիսի ուղղութիւնը դէպի գեղածիճաղ նպատակը մաքառում կ'ենթադրէ, պէտք է բոլորովին խուսափիլ համակերպելէ սովորական ու անբարոյացուցիչ հրապարակագրութեան մը հետ, որ զինքը վնասակարութեան պիտի մատնէ :

Իրականութիւնը գործին եզրակացութիւնն է ըստ Արեւիսի. հայ կիներ զարգացնել ու ազնուացնել, գիտակից ընել իր պարաքերուն ու իրաւունքներուն. իրականութիւն մըն է այսօր, այդ տեսակէտով, հայ կնոջ տգիտութիւնը, սորուկ վիճակը, բայց միւս կողմէ միեւնոյն Արեւիսն է որ հայ կնոջ կուտայ «պոռնկացումի» պատկերներ, ապականութեան տեսարաններ զորս վերլուծելու համար հայ կիներ հարկաւոր զարգացումը արգէն իւրացած ըլլալու է. ահաւասիկ յրականութիւնը եզրակացութեան փոխուած, ահաւասիկ Արեւիսի անհեթեթ տգիտութիւնը, չպիտի ըսեմ անտեսութիւնը : Օ՛հ, չատ երկար կ'ըլլայ այս խորհրդածութիւններու շղթան օղակի. օրինակը առնենք նոյն խի Արեւիսէն, «հայ կնոջ բարոյականութիւն ու ազատագրում» քարոզող օրգանէն :

«Մառի» կը սիրերգէ — երիտասարդ մը որ կը ծիւրի եւ աղջիկ մը որ կը մերժէ : Աղջիկը որ ահա իր սիրովը կը

փրկէ ծիւրողը, ու յանկարծ ծիւրողը կը խորշի իր այն-  
քան սիրածէն, նոր մը ընտրած ըլլալով .

Իմ դայուկես կը խորշի՛ս . . .  
Յառած այգերդ այն աղո՛ր,  
Նոր ընտրելոյ մ'բարդարոր,  
Զիս կը սպաննես . սիրելի՛ս

Որքա՛ն պղատոնական ու ազնուացուցիչ սէ՛ր . . . :  
(Տես Արժեւիս, թիւ 2, էջ 45, «Կը յիշե՛ս») :

Բայց այդ սէրը ուրիշ տեղ աւելի իրական գոյներով  
կը նկարագրուի. «պոռնիկի» մը սէրը որ վաճառքի ելած  
է, թաքմ աղջիկ մը որ ձուկ կ'որսայ . . . իր թակարթին մէջ  
(Ինչո՞ւ ո՛չ ուզեցանք), — օ՛հ դժոխքմբեր մտքի մխրճում :

Տեսէք «Տէրվիշ»ը՝ որ «Ինկած կին»ը կ'ողբայ (Արժե-  
ւիս թիւ 3, էջ 88) .

Ճարած սալոր ես, արեւն տեղ կը կարես .  
Ճարսիկ ձկնորսի պես ձուկ կը քակարթես .  
Պոռնիկ կնկան դուն հարսպս մակարթ ես .  
Քեզ ձեկ խօսքով ես ինկած կիս կ'անուանեմ :

Եւրոպայի մէջ իսկ, ուր միջավայրը աւելի անկաշ-  
կանդ է, կը թելագրէր մեզ անցեալները ընկեր մը, այդ-  
քան սանձարձակ կերպով չեն հրապարակագրեր կնոջ ամոթ-  
խածութիւնը վիրաւորող ածականները : — Բայց միթէ՞  
այդ պատճառ մըն է որ Արժեւիս խուսափի ոչ միայն բա-  
ռեր, այլեւ այդ կարգի գրգռիչ ու կրքոտ ֆռաղներ ու  
կտորներ խմբագրելէ ու հիւրնկալելէ . . . : Օ՛հ, հայ կինը,  
անոր բարոյականը կ'ազնուացնեն կոր . . . :

Հայ կնոջ դարաւոր պարկեշտութեան սիրոյն համար  
գոնէ թող ըլլայ, այդքան գրական նուրբ գոհարներ (1 ?)  
իրեն չհրամցնելու խղճահարութիւնը ունեցէ՛ք, օրիորդ  
խմբագրապետուհի . . . : Եթէ ունիք կամ ձեր աշխատակից-  
ները ունին «պոռնկացումի գլուխ գործոցներ» ձեր ծոցին  
վրայ սեղմեցէք եւ ո՛չ թէ Արժեւիսով ընդհանուր գայ-  
թակղութեան տեղը տուէք : Մ. Պ.

ՀԱՅՈՑ Թ. Հ. ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱ-  
ԽԱԳԻՄՇ (ԲՃ. Ս. Շահ-Նազարեանց. Մոսկուա — Tierskaja,  
68, գին 1 ըուբլի) . — Այս հատորը կովկասի Հ. Թ. Հ.  
Դպրանոցներու միանուագ կանոնագրութիւն մը տալու  
փորձ մըն է, զոր պ. ԲՃ. Ս. Շահ-Նազարեանց կը ներկայա-  
ցընէ այդ հաստատութիւններու բոլոր վարչութեանց եւ  
հասարակութեան անհասարակ : Մեր կարծիքը այդ մասին

արդէն «Համալսարան»ի Ա. Շրջանին մէջ յայտնած էինք, ինչ որ կրնանք աւելցնել այժմ այն է որ ներկայացուած հատորը մեզի կը թուի լուրջ կանոնադրութեան մը հմտօրէն պատրաստուած նախագիծը, զոր մշակել կը հրաւիրենք ենթակայ հաստատութիւններու եւ անոնց տեղաւորան պայմաններու մօտէն ծանօթ կարող անձնաւորութիւնները:

Քանի որ պ. բժիշկ Ս. Շահ-Նազարեանց հրաւեր կը կարգայ զբաղել կենսական հարցով մը, — ու իր ջանքերը եւ ցարդ ըրած գոհողութիւնները անուրանալի են այդ մասին, — ջանալու է հաւաքական ուժ տալ գործին, եթէ նոյն խնդիրն ինչպէս կ'առարկեն ոմանք, այդ ջանքին մէջ որ եւ է նկատում կայ:

Կենսական խնդիրներու մէջ համերաշխութիւն փրկուողները միշտ, խոյս տանք յաւէտ քինախնդիր քննադատութեամբ հասարակական գործերը խարսխելէ, կաշկանջուողներէ: Մ. Պ.

**ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ԹՈՅՆՐ,**  
(Բժ. Վ. Արծրունի, Թիֆլիզ: Գին 15 կոպ.) — Պատկերազարդ, 83 փոքրագիր էջերով, ժողովրդային գեղեցիկ հրատարակութիւն մըն է, եւ երբորդը կը կազմէ Բժ. Վ. Արծրունիի Բժշկի Զոռյցներուն: Առաջին մասին մէջ կը բացատրուի ամփոփ ու պարզ լեզուով մը թէ որոնք են վարակիչ հիւսանդութիւնները. ի՞նչպէս կը սկսին եւ կը տարածուին, թէ ի՞նչ է առհասարակ բուսակենսիկը (զոր յարգելի բժիշկը մանրիկ կ'անուանէ: Աւելորդ չէ այս տեղ միջանկեալ շեշտել թէ ինչ որ պակտերի (bactérie) կամ բուսակենսիկ է ճիշտօք կամ մակերիկ մըն է. բայց ինչ որ միկրօր մըն է պակտերի մը չէ. չափազանց օգտակար ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլար բժ. Վ. Արծրունին եթէ ժողովրդին բերնին մէջ գործնական ճամբով իր գրած բառերը աւելի սերտ ճշգրտութեամբ մը յերիւրէր թարգմանաբար):

Գրքոյկին Բ. մասին մէջ զարձեալ միեւնոյն պարզութեամբ կը խօսուի այն միջոցներուն վրայ որոնցմով կարելի է կողուիլ այդ վարակիչ հիւսանդութիւններուն դէմ ու առողջապահական ամփոփ խրատներ կը տրուին:

Թրքախայերու մէջ ցարդ այդ կարգի ժողովրդային հրատարակութիւններ ընելու լուրջ քայլ առնուած չէ: Փափաքելի էր որ բժ. Վ. Արծրունիի հրատարակութիւնները իրենց գտած քաջալերութեամբ խթան մը ըլլային Պոլսոյ շատ մը հայ բժիշկներուն, որոնք միայն հիւանդներու այցելել ու գրամ հաւաքել բժշկութեան բնարան ընտրած են:

\*\*\*

Վ Ա Խ Ը

(ՀՈԳԵ-ԲԵԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

(Փրօֆ. Թ. ՄՕՍՕ Թիւրէնի համալսարանէն)

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԸ

I

Այն երեկոն միշտ կը յիշեմ ու պիտի վերյիշեմ զեռ  
երկար ժամանակ: Ունկնդիրներով խոնուած մեծ ամփի-  
թատրոնի մը մէջ բացուող ապակեպատ դրան մը վարա-  
գոյրին ետեւէն սրտատրոփ կը դիտէի ամբողջ:

Առաջին դասախօսութիւն մը պիտի ընէի, արդէն  
ինքզիքս նուաստացած կը գտնէի ու կը զղջայի թէ կա-  
մաւ անձս ենթարկած էի բանախօսութիւն մը ընելու այն  
մեծ ամփիթատրոնին մէջ՝ ուր շատ անգամներ դասախօսած  
էին ամէնէն հոչակաւոր եւ կարող վարպետներս: Եւ գի-  
տէ՞ք, ի՞նչ էր բանախօսութեանս նիւթը: — Գունի բնա-  
խօսութեան վրայ կատարած մէկ քանի հետազոտութիւն-  
ներս պիտի պարզէի գիտուններու եւ ժողովուրդին առջեւ:

Որքան որ ժամը կը մօտենար, սոսկումս այնքան  
կ'աւելնար: Կը վախնայի որ պիտի շփոթէի, կակազէի եւ  
մնայի թերանարաց ու համր: Սիրտս ուժգին կը տրոփէր  
եւ խորխորատի մը անդունդը դիտողի մը անձկութիւնը  
կը զգայի:

Վերջապէս ժամը ութը հնչեց: Ուզեցի վերջին ակնարկ  
մը նետել բանախօսութեանս վրայ եւ գաղափարներս ամ-  
փոփել: Բայց Աստուած իմ, ի՞նչ յուսախափութիւն...  
Ջարհուրանքս անբացատրելի եղաւ երբ նշմարեցի թէ  
գաղափարներուս թիւը կորսնցուցած էի եւ չէի յաջողեր  
մտածումներուս հատուածները շղթայաւորել: Հարիւր ան-  
գամ կրկնած եւ վերակրկնած փորձերս, այն երկար պար-  
բերութիւնները զոր գոց ըրած էի, երազի մը նման ա-  
մէնքն ալ օդին մէջ ցնդած էին, իբր թէ բնաւ մտքէս  
անգամ անցած չըլլային:

Յիշողութեանս այս բացակայութիւնը անբացատրելի անհանգստութիւն պատճառեց : Կը տեսնեմ դեռ այսօրուան պէս դռնապանը՝ որ դուռը կը բանայ եւ ես՝ հազիւ թէ դուռը աչքիս առջեւ բաց գտայ՝ ամբողջ մարմնոյս մէջ սարսուռ մը զգացի եւ բզզիւն մը ականջներս ի վար :

Վերջապէս սեղանին առջեւն եմ, զարհուրեցուցիչ եւ մեռելական լուութեան մը մէջ : Ինձ անանկ կը թուէր թէ փոթորկալից ուկէանոսին մէջ սուզում մը ունեցած էի եւ գլուխս հազիւ թէ ջուրէն դուրս հանած՝ խարակի մը վրայ նետուած էի, այս ընդարձակ ամփիթատրոնին մէջ : Առաջին խօսքերս վրաս մասնաւոր տպաւորութիւն մը թողած էին : Կր կարծէի թէ ձայնս կը կորսուէր ընդարձակ անապատի մը մէջ, որ հազիւ թէ արձակուած՝ կը մարէր եւ անլսելի կը դառնար :

Մեքենապէս քանի մը բառեր թոթովելէ վերջ, տեսայ թէ արդէն յառաջարանս աւարտած էի եւ սարսափահար կը մնայի նշմարելով որ յիշողութիւնս այդ աստիճան զիս մատնեց ու տկարացայ նոյն իսկ այն կէտերուն մէջ որոնց վրայ շատ եւ շատ վստահ էի : Սակայն յետագարձ ակնարկ մը այլեւս չէի կրնար նետել . բոլորովին շուարած՝ ինձ կը մնար շարունակել, ինչ որ քրի արդէն :

Ամփիթատրոնը ամպի հսկայ զանգուածի մը կերպարանքը առած էր : Կամայ կամայ հորիզոնին վրայ խաւարը փարատեցաւ եւ ամբոխին մէջ նշմարեցի մէկ քանի բարեսիրտ եւ բարեկամ դէմքեր, որոնց վրայ աչքերս յառած մնացին, ինչպէս խեղդուող անձ մը՝ ծփուն լաստի մը վրայ : Անոնց քովը ուշադիր անձինք՝ որոնք գլխով գոհունակութեան նշաններ կ'արտայայտէին եւ ձեռքերնին ականջնուն մօտեցնելով ձայնահաւաք դործի մը կը ձեւացնէին աւելի լաւ հաւաքելու համար բերնէս մեքենաբար թռած բառերը :

Վերջապէս սրահին մէջ ինքզինքս կը գտնէի կղզիացած, նուաստացած, խոհարհ, տխեղծ, տկար, իբր թէ մեղքերս մէկիկ մէկիկ կը խոստովանէի ունկնդիրներուն :

Առաջին եւ սակայն ամէնէն սոսկալի յուզումս արդէն փարատած էր : Բայց որքա՛ն չորցած, ցամբած էր կոկորդըս եւ այտերս ինչպէ՛ս կ'այրէին . . . ինչպէ՛ս շնչառութիւնս կտրատուած էր ու ձայնս մարած, զողզուուն . . . : Պարբերութիւններուս ներզանակութիւնը շատ անգամ

չնչառութեամբ մը կ'ընդհատուէր եւ հաղիւ շունչս կը բաւէր արտասանելու համար վերջին բառերը՝ որոնք գաղափարս կ'ամբողջացնէին :

Ասոր հետ մէկտեղ բանախօսութեանս շղթան բաւական կանոնաւոր կը քակուէր . երջանիկ ու գոհ էի տեսնելով որ գաղափարներս ինքնին եւ յաջորդաբար կը ներկայանային , իբր թէ շարայարուած ըլլային ազատարար թելով մը՝ որուն կը հետեւէի կուրօրէն , առանց յետադարձ ակնարկ մը նետելու եւ որ զիս լափիւրինթոսէն պիտի ազատէր :

Դադրեցաւ նաեւ ձեռներուս գողգոջումը՝ որ կը ցնցէր երբեմն երբեմն փորձեր կատարած գործիքներս եւ կամ ցցուցած նկարներս :

Վերջապէս ամբողջ մարմնոյս վրայ ընկճում մը կը զգայի . մկանունքներս կծկած կը թուէին , իսկ սրունքներս ուժասպառ՝ տեղի կուտային :

Աւարտման մօտ , զգացի արեանս շրջանը եւ յետոյ մի քանի անհանդիստ վայրկեաններ եւս սահեցան : Ձայնս որ այնքան կը դողար , եզրակացութեան հաստատական եւ համոզիչ յատկութիւն մը առած էր :

Շնչասպառ էի եւ քրտինքին մէջ կը լողայի . ընկճուելու աստիճանին հասեր էի , այնքան ուժերս կը թերանային : Ամիթիթատրոնին աստիճանները դիտելով , ինձ այնպէս կը թուէր թէ վերջին բառերս արտասանած ժամանակ հրէշի մը երախը պիտի բացուէր առջեւս ու զիս ակնթարթի մը մէջ կուլ տար :

## II

Նա որ ճարտասանի մը բանախօսութեան վրայ գիրք մը գրէ , ծտոսյութիւն մը պիտի մատուցանէ այն անհատներուն , որոնց շատ սուղի կը նստի այն խելակորոյս չափազանց սէրը՝ որ զմեզ կ'առաջնորդէ հասարակութեան առջեւ խօսելու : Բայց հարկ է որ կատարեալ եւ լուրջ աշխատութիւն մը ըլլայ , ուր ամէն մարդ կարողանայ ինքզինքը ճանչնալ ինչպէս հայելիի մը մէջ եւ զգալ այն ծաղրն , որուն ինքզինքը կ'ենթարկէ եւ այն պատիժն որ անոր կը սպասէ , երբ բեմը կ'ելլէ եւ պէտք եղած պատրաստութիւնը չունի . պէտք է որ հոն կարենայ տեսնել

իր գունատութիւնը, վրդովիչ գէմքը, իր տենդային յուզումը, զգայ թէ իր ամբողջ մարմինը կը դողդղայ իբր թէ ներքին փոթորիկէ մը տարուբերուած ըլլար, եւ փորձէ առաջուց, յաղթելու անձկութեան, փամփուշտի կծկման, անչէջ ծարաւին, գլխու պտոյտին, վերջապէս զգայ դժութեան, կարեկցութեան բոլոր աստիճանները, որոնց հասարակութիւնը, ունկնդիրները կ'ենթարկուին, երբ տեսնեն ճարտասանին շիտթութիւնը:

Շատ դիւրաւ կարելի է հասկնալ յուզման ազդեցութիւնը ամբողջ մարմնոյն վրայ, եթէ ի նկատի առնենք թէ ինչ ծանր աշխատութեամբ ճարտասանները յաջողած են. եթէ դիտենք ուսումնասիրութիւնները, ջանքերը, փորձերը որոնց ենթարկուած են եւ առանց որոնց կարող պիտի չըլլային ունենալ եւ պահել այն ձայնը, ձեւերը, համոզիչ խօսքերը, երբ կը գտնուին բարեկամական կամ ընտանեկան երեկոյթի մը մէջ:

Տեսած եմ խելացի մարդիկ, վառվռուն եւ արթուն մտքով, որոնք մնացած են քարացած, ապուշցած, անփորձ նոր զինուորի մը նման ձեռները կախած, աչքերը գետինը յառած, կակազելով իրենց բանախօսութիւնը՝ արեւելեան տխուր եղանակի մը պէս: Ուրիշներ ալ կը ճանչնամ, զուարթ խօսողներ, որոնք աչքերնին բարձրացրնելու չեն համարձակած, երբ պաշտօնական պատեհութեան մը մէջ, ճիշտ պարբերութեան մէջտեղ կը լռէին, կրկնելով 4-5 անգամ միեւնոյն բառերը, յետոյ մուռջ, մեծ յուզումով կը բռնէին սեղանը կամ ժամացոյցնուն շղթան, իբր թէ փրկութեան խարիսխ մը փնտռէին: Անհատներ կան որոնք երեկոյթի մը կ'երթան եւ սկիզբէն ուրախութիւնը կը խանգարեն, որովհետեւ բնաւ համ մը չեն առներ, զբաղած եւ անհանդիստ կը մնան ու միշտ կը շարժարուին վախնալով որ յիշողութիւննին զիրենք մատնէ: Ժամը հասնելուն պէս, ոտքի կ'ելլեն տոգոյն եւ դողդոջուն, այն աստիճան որ մարդուն գուլթը կը շարժեն, յուզումէն ճնշուած, աչքերը խոշոր մը բացած, կը թոթովեն քանի մը բառեր առանց շարունակութեան:

Ծեր ուսուցիչներէս մէկին, որ հետտրական ճարտասանութեան ուսուցիչ եղաւ Թորինոյի Աթնէյին մէջ, այնքան սրունքները կը դողային որ ոտքի վրայ կարող չէր խօսիլ եւ վերջին անգամ իր ճարտասանութեան յաղ-

Թուժեան պտուղը մերժելու ստիպուած էր, որովհետեւ բանախօսութեան աւարտման միջոցին ո՛չ կարող էր աթոռէն հլլել, ո՛չ իջնալ, եւ ո՛չ ալ քալել:

Ինչո՞ւ ուրեմն հասարակութեան մը առջեւ խօսելու այս պարզ գործողութեան համար այսքա՛ն շփոթութիւն. ինչո՞ւ այսքա՛ն խորին անկանոնութիւն մը ամբողջ մարմնոյն մէջ: Կ'ըսեն թէ ջիղերը, ուղեղը, ըմբռնումը, մարդու ֆիզիքական բնոյթը պատճառ են, որոնց չենք կրնար հրամայել: Բայց գաղափարներն ալ կը շուարին: Ո՞ւր գնաց մեր կամքի ուժը, հոգւոյն գոռոզութիւնը, որ մեզ այնքա՛ն սքանչելի կ'ընէ եւ անվախ, երբ մինակ ենք, եւ այսքա՛ն կը նուաստացնէ երբ քանի մը մարդոց առջեւ կը գտնուինք:

Կը խոստովանիմ որ այս խնդիրը լուծելը դիւրին չէ եւ կը կարծեմ որ ամէնէն հաւանական եւ վստահելի միջոցն է վերլուծել՝ առանց նախապաշարումի, ինչ որ գիտենք ուղեղի աշխատութեան վրայ եւ ինչ որ բնախօսները ըսած են յենած յուզումներու եւ դատողութեան երեւոյթներու վրայ կատարուած փորձերու վրայ:

### III

Յուզումներու բնախօսութեան վրայ ամէնէն կարեւոր եւ առաջին գիրքը Տէքարթի կը պարտինք: Արդի գիտութեան այս մեծ վերանորոգիչը՝ իր հանճարեղ մաքով ամբարած էր գիտութեան բոլոր ճիւղերը եւ եղաւ թուագէտ, բնադէտ եւ բնախօս: Հաստատեց թէ Արիսթոտէլի փիլիսոփայութիւնը, որ այն ատեն ամէն տեղ կը տիրէր, կեանքի խնդիրներէն եւ ոչ մին լուծած էր:

Տէքարթէ առաջ ոչ ոք գաղափար իսկ ունեցաւ այն պարզ մեքենականութեան վրայ, որուն շնորհիւ առաջ կուգան յուզումներու ընկերացող ակամայ շարժումները: Այսպէս հոգիին բնախօսութեան ուսման առաջին հիմը դրաւ: Անկից ի վեր երկուքուկէս դարեր անցան եւ իր գործը կը մնայ իբր սքանչացման արժանի արձան մը:

Գիտութիւնը այսօր այնքան առաջ գացած է՝ որ բնախօսութեան տարրերը հասկնալու համար ոչ ոք անշուշտ Տէքարթի Մարդկային մարմնոյն երկը պիտի կարգայ. բայց անոնք, որ գիտութեան պատմութիւնը ուսումնասիրած են, գիտեն թէ այդ գրքին մէջ էջեր կան ուր կը տեսնուին հանճարի նշոյլներ որոնք գիտութիւնը բեղմնաւորեցին:

Մալպոմանչ կը պատմէ թէ երբ առաջին անգամ Տէքարթի գիրքը ձեռք անցուց, հոն յարուցուած նոր գաղափարները իրեն այնքան կենդանի հաճոյք եւ սքանչացում կը պատճառէին որ սիրաւ ուժգին կը տրոփէր եւ երբեմն երբեմն ստիպուած էր իր ընթերցումը դադրեցնել:

Հոս պարտիմ յիշել նաև երկու ուրիշ անձեր, ոչ նուազ հոչակաւոր, որոնք յուզումներու ուսումնասիրութեան որոշ ուղղութիւն մը եւ գիտական կազապար մը տուին. ասոնք են Հէրպէրթ Սրէնսէր եւ Տարուին Ասոնցմէ վերջ ամէնէ առաջին տեղը կը գրաւէ Մոնթէկացցա :

Տարուին հանճար մը եղաւ եւ ժողովրդական հատուները գրելու արուեստին մէջ ամէնէն մեծ վարպետներէն մէկը : Իր մեծութիւնը, ինչ որ զինքը անբաղդատելի վարպետ մը կը հանդիսացնէ, այն ճշմարիտ վերապահութիւնն է, զոր ի գործ կը գնէ հաստատութեանց մէջ : Իր եզրակացութիւնները երբեք բացարձակ չեն :

Վարդապետականութիւնը՝ որ միջակ իմացականութիւնները կ'ամլացնէ եւ ընդհանրութիւնը կը փտեցնէ, գիտութեան այդ համաճարակը ընաւ ազդեցութիւն չէր կրնար ընել Տարուինի վրայ : Միամտօրէն հասարակութեան առջեւ պարզեց գիտութեան թերի կողմերը, անուրբ քննադատը եղաւ նոյն իսկ իր գործերուն եւ չյաւուցաւ իր վարդապետութեան թերութիւնները ցոյց աւելու : Մարդ երբ անոր գիրքը կարչայ, պիտի ըսէ թէ Տարուին միշտ կը վախնայ որ մի գուցէ գիտութեան ամէնէն կնճռոտ խնդիրներու անտեղեակ ընթերցողները զինք լաւ չհասկնան : Այնքա՛ն զլոյս էր, իր խօսքերուն մէջ այնքա՛ն չափաւոր, իր թելադրութեանց մէջ այնքա՛ն խոհեմ որ նոյն իսկ իր «Յուզումներու Բացատրութիւն» անուն գրքին մէջ (որ թերեւ Տարուինի գործերուն ամէնէն անկատարն է) չկայ կէտ մը, որուն մարդ կարենայ խղճմտօրէն հակառակիլ, կամ սխալ մը՝ որով կարող ըլլայ զայն ամբաստանել :

Եթէ գիտունները կարող եղան Տարուինի աշխատութիւններու վրայ բան մը աւելցնել եւ անոր գաղափարներէն մի քանին վերաքննել, գայդ կը պարտին գիտութեան արագընթաց յառաջդիմութեան :

Իայց բան մը կը պակսէր Տարուինին, բաւականաչափ բնախօս չէր : Ասոր հետ մէկտեղ Զեւաշրջման վարդապետութիւնը ժամանակակից գիտութեան հիմք պիտի ըլլայ, բայց Սրէնսէրի եւ Տարուինի մէկ քանի սկզբունքները պիտի բարեփոխուին որչափ որ գործարաններու գործողութեանց պատշաճման վրայ ունեցած ծանօթութիւններն իս ալ աւելի յառաջանան :

Թարգմ. Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ

Ֆրանսա, Մոնպէլի

20, Մայիս, 1902

(Շարունակելի)

## ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Բարոյական, Ուսումնական, Արուեստագիտական  
Կը խմբագրուի Վիեննայի Միխիթարեան Հայրերէն: Բաժ-  
նեզինը կանխիկ է՝ ամէն տեղի համար 10 ֆրանք. գիմել՝

Rédaction de la Revue Handess

Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

## ԲԱԶՄԱՎԷՊ

ԱՄՍՈՒԳԻՐ

Բաժանորդագրութիւնը 10 ֆրանք կանխիկ: Դիմել

Rédaction de la Revue Pazmaveb

(Italie) Venise (S<sup>t</sup>-Lazare)

## Լ Ո Ւ Մ Ա Յ

ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Խմբագիր-հրատարակիչ Գիւտ Ա. քհյ. Աղանեանց: Ներ-  
կայ 1902 թուի յունուարի 1-ից հրատարակվում է երկու  
ամիսը մի անգամ:

Հասցէ՝ Tiflis, rédaction du journal arménien Louma

## Ա Ղ Բ Ի Ի Ր

Մանկական եւ Մանկախարժական Անուաքերք եւ

## Տ Ա Ր Ա Չ

Գրական եւ Գեղարուեստական Շաբաքաքերք

(Խմբագիր հրատարակիչ Տ. Նազարեան)

Աղբիւրի ասրեկան գինն է 3 ուլբի, իսկ Տարազ 6 ուլբ.

Հասցէ՝ Rédaction des journaux Agbur-Taraz

Tiflis (Russie)

## EST - OUEST

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ (AGENCE) ԹՂԹԱԿՑԱԿԱՆ, ՀԵՌԱԳՐԱԿԱՆ  
ԵՒ

ՏԵԼԵՏՈՐԱԿԱՆ, ՀԵՏԵՒԵԱԼ ԲԱԺԻՆՆԵՐՈՎ

I. Բաղախական, Ընկերական, եղև. խնդիրներ, —  
II. Ֆինանսական եւ Խնայողական խնդիրներ, — III. Վաճա-  
նականական խնդիրներ, — IV. Յայտարարութեան (Publicité)  
վերաբերող խնդիրներ:

Թղթակցութիւն ամէն լիզուով՝ չարաթը 2—3 անգամ  
կամ ամէնօրեայ ըստ կարեւորութեան թեան թերթին եւ սեղուոյն:  
Մասնաւոր ճիւղեր ամէն երկրի համար:

Հասցէ:

Փոստի համար՝ 18, Rue Denfert-Rochereau. Paris (V<sup>e</sup>)

Հեռագրի համար՝ Davibey — Paris

Տելեֆոն՝ 814—54

Ընդհանուր Տնօրէն  
ՄԵԼԻՔ Ս. ԴՍԻԹ-ԲԷԿ

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

## Բ. Ծ Ր Զ Ա Ն

Իւրաքանչիւր Երջանին մէջ կուտայ 12 թիւ: Բաժանորդագրութիւնը թիւի վրայ է:

12 թիւ ամեն երկիր 10 Ֆրանք, (4 ռուբլի, 2 տոլար):  
6 " " " " 6 " (2 1/2 " 1ա. 20 ս.):

Տաճկաստանի եւ Պարսկաստանի համար 8 Ֆրանք (40 շրշ. ոսկեղրամ):  
6 թիւի բաժանորդագրութիւնը այս վերջին երկիրներու համար 5 Ֆրանք (25 շրշ.):

Այն կրթական հաստատութիւնները՝ որոնք լայն պիւտճէ մը չունին, կրնան ստանալ 12 թիւը կէս բաժնեգինով, այսինքն 6 Ֆրանքի:

Նամակ կամ բաժնեգին եւ թղթակցութիւն ղրկել Տնօրէն-խմբագրին՝

Missac Baghdassarian

4, rue Ortolan — PARIS (5)

### «ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Ախլախ (Ռուսիա)	Արժ. Տ. Ներսէս քչյ. Համարձոււմեանց
Դալիթ (Պարսկ.)	Տօք. Կարապետ Փաշեան
Եգիպտոս (Գահիրէ)	Պարոն Միհրան Չրաքեան
Երեւան (Ռուսիա)	Պարոն Եղիա Տ. Արիստակէսեան
Երզնկա	Պարոն Նոյիկ Տ. Ստեփանեան (փ. գ. Գառնիկ Մ. Ճիզմէճեան)
Թիֆլիս (Ռուսիա)	Արժ. Տ. Եգնիկ Աւազ քչյ. Երզնկեանց
Թոֆաթ	Պարոն Խաչիկ Թաշճեան
Լին (Ամերիկա)	Պարոն Յակոբ Պէրպէրեան
Խարբնդ	Պարոն Ռուբէն Չարզարեան
Նիկոնիսիս	Պարոն Գառնիկ Ա. Պաղտասարեան
Տրապիզոն	Պարոն Պ. Սիմաւոնեան

### ՏՊԱՐԱՆ - ԳՐԱՏՈՒՆ " ՀԱՄԱԼՍԱՐԱՆ " Ի

Ա. Երջան Համալսարանի (12 թիւ	առանց կազմի)	10 Ֆրանք
»	»	12 »
»	»	15 »
»	» կէս կաշի ոսկեղօծ	20 »
Տրանսասիայ պատկերազարդ բառարան (A—H)		
(Իշխան Գ. Լուսինեան)		25 »
Դիւցա՛ գնօրէն (Ատոմ Եարճանեան)	1 եւ 2	»
Մկա վախ Չունիմ (Գիւլստանցի)	—	50սնթ
Ուխտ (Բէլլուբէկեան)	1	»

Այս հրատարակութիւնները մեծաքանակ գնողներուն գոհացուցիչ զեղջ կը լինի:

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի (Պ. Միսսօ) սպարանին մէջ կը լինին առեւ սեւակ սպրազրական աշխատութիւններ խիստ խնամուած կերպով եւ պահանջուած կատարեալ նրբութեամբ:

Յանձնարարութիւնները կանխիկ են եւ կը կատարուին ճշգրութեամբ: «Համալսարան»ի Ա. Երջանի համարները սպառելու վրայ են, մեր այն նոր բաժանորդները՝ որ կը փափաքին ունենալ «Համալսարան»ի Ա. Երջանի համարները, կը վճարեն բացառաբար «կէս կաշի» կազմին համար 12 Ֆրանք եւ «կէս կաշի ոսկեղօծ»ին 15 Ֆրանք:

Տպարան-Գրատան վերաբերեալ ամեն յանձնարարութիւն ղրկել խմբագրապետին անուան: